# Ազգ
Azg

5 ԱՊՐԻԼ 2013 ՈՒՐԲԱԹ 53(5136)

ISSN: 1829-1651


## Բա Գուլուզադեն ո՞ւմ «շունն» է

**Մարտի 30-ին Բաքվում անցկացվել է «գիտաժողով», որը, ոչ ավել, ոչ պակաս, անվանված էր «Ժամանակակից Հարավային Ադրբեջանի վաղվա օրը»: Միջոցառման գլխավոր «նյութ-մեյքերը» արտաքին քաղաքականության հարցերով նախկին պետխորհրդական Վաֆա Գուլուզադեն էր, որն էլ հնչեցրել է հիմնական կարգախոսը. «Իրանը որպես պետություն ապագա չունի, հարկ է այսօրվանից սկսել միավորման նախապատրաստական աշխատանքները»:**

**Պաշտոնական Թեհրանն այդ առթիվ բողոքի նոտա է հղել Ադրբեջանին՝ պահանջելով բացատրություններ: Երեկ ԱԳՆ մամլո խոսնակ Էլման Աբդուլլաեւը տեղեկացրել է, որ պատասխան նոտան Իրանի ԱԳՆ-ին է փոխանցել Թեհրանում Ադրբեջանի դեսպան Ջավանշիր Ախունդովը: Ըստ այդմ, «հայտարարությունները, որ հնչել են «Ժամանակակից Հարավային Ադրբեջանի վաղվա օրը» գիտաժողովում, չեն արտահայտում Ադրբեջանի պաշտոնական դիրքորոշումը»:**

**Այլ բան, իհարկե, չէր էլ սպասվում: ԱԳՆ-ն հո չէր խոստովանելու, որ միջոցառումը կազմակերպվել է Ադրբեջանի իշխանությունների իմացությամբ եւ հովանավորությամբ: Բայց հո աշխարհը գիտի, որ Բաքվում երեք մարդ երբ միաժամանակ գտնվում են նույն սրահում, նրանցից մեկը Իլհամ Ալիեւի աշխատակազմի, երկրորդը՝ ԱԱ նախարարության, երրորդն էլ «Ենի Ազարբայջան» կուսակցությունից է: Հակառակ դեպքում ոստիկանությունը գրում է «չարտոնված հավաքը»:**

**Իրանական կողմը, բնականաբար, թույլ չի տվել, որ Բաքվի վարչախումբն իր հետ խոսի «դիվանագիտական» լեզվով: Խորհրդարանի ազգային անվտանգության եւ արտաքին քաղաքականության հարցերի հանձնաժողովի նախագահ Ալաադդին Բորուջերդին չափազանց կոշտ հայտարարություն է արել. «Նման քայլերը վնասակար ազդեցություն կգործեն երկրների (Իրանի եւ Ադրբեջանի) հարաբերությունների վրա: Եթե սկսվեն այդպիսի (միավորման) գործընթացներ, ապա ժամանակին Իրանից անջատված Ադրբեջանը կարող է միանալ Իրանին, եւ հակառակը երբեք տեղի չի ունենա» (տես՝ http://haqqin.az/news/4818):**

**Միաժամանակ նա Ադրբեջանին խորհուրդ է տվել «չզբաղվել սադրանքով, քանի որ նման անջատողական հայտարարություններ Ադրբեջանի համար օգտակար չեն լինի»: Նկատենք, որ միջոցառումն անցկացվել է այն տեղեկատվության ֆոնին, որ «նախապատրաստվում է Իլհամ Ալիեւի այցն Իրան»: Պետք է ենթադրել, որ Ադրբեջանին պարզապես առիթ է պետք եղել, որ այդ այցը չկայանա կամ Թեհրանում Իլհամ Ալիեւը «կարեւոր ասելիք ունենա»:**

**Զարմանալի չէ, որ Ադրբեջանը ձգտում է «հանուն իսլամական համերաշխության» Իրանից Հայաստանի հետ կապերի խզման հավաստիացում ստանալ: Եվ բացառված չէ, որ «Հարավային Ադրբեջանի» թեմայի նման կտրուկ շահարկում արվել է, որպեսզի իրանական կողմը Իլհամ Ալիեւին «խնդրի կանխել հետագա քննարկումները», ինչի դիմաց էլ վերջինս կարող է Թեհրանի առջեւ բարձրացնել Իրան-Հայաստան գործընկերության «սառեցման» հարցը:**

**Վաֆա Գուլուզադեի ներկայությունը «Հարավային Ադրբեջանի վաղվա օրվա» թեմայով միջոցառմանն ակնհայտորեն խոսում է դրա քաղաքական ենթատեքստի եւ իշխանությունների կողմից կազմակերպված լինելու մասին: Վարչախմբի շահերի սպասարկու «քաղաքագետը», որ դեռեւս Եգիպտոսում խորհրդային դեսպանատանն աշխատելու տարիներին է արեւմտյան հատուկ ծառայությունների գործակալ «գրվել», չէր կարող առանց Իլհամ Ալիեւի համաձայնության Իրանի հասցեին նույնիսկ կեսբերան «հաչել», ուր մնաց, թե կանխագուշակեր «մոլլապետության շուտափույթ կործանումը»:**

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

## Վարչապետ. Հայաստանի թիվ մեկ խնդիրը զբաղվածությունն է»



Կառավարությունը երեկվա նիստում հավանության է արժանացրել «Զբաղվածության մասին» օրենքի հայեցակարգը, որով առաջարկվում է զբաղվածության քաղաքականության մշակման եւ իրականացման մոտեցումներն ու մեխանիզմներն արտացոլող նոր օրենքի հիմնադրույթները:

Վարչապետ **Տիգրան Սարգսյանը** աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարին հանձնարարել է օրենքի հայեցակարգը համապարփակ ձեւով ներկայացնել հանրությանը: «Գաղտնիք չէ, որ Հայաստանի թիվ մեկ խնդիրն աշխատանքի խնդիրն է, եւ մարդիկ մշտապես այդ հարցն են բարձրացնում, որ չկա աշխատանք: Եթե մենք ունենք 3000-ից ավելի թափուր հաստիք, ապա, մի կողմից, պարտավոր ենք ավելի ակտիվորեն այդ տեղեկությունը տեղ հասցնել, երկրորդ՝ պետք է ներկայացնենք՝ ինչ հնարավորություն ենք տալիս վերապատրաստման համար: Եթե մարդը լսում է, որ, օրինակ, խառատի աշխատանքի թափուր տեղ կա, ինքն ասում է ` ցավոք սրտի, խառատ չեմ, բայց եթե զուգահեռաբար ասենք, որ պետությունն անվճար վերապատրաստում է ձեզ, եւ դուք կարող եք պետության այդ ծրագրից օգտվել, վերապատրաստվել, դա կնշանակի ավելի ակտիվ զբաղվածության քաղաքականություն իրականացնել»:

Անդրադառնալով Արամի փողոցի շենքի բնակարանների կրկնակի վաճառքից տուժած բնակիչների խնդիրներին, երբ «Գապբնակշին» ՍՊԸ-ն Արամի փողոցի 72-80 հասցեում կառուցված բազմաբնակարան շենքում միեւնույն բնակարանները վաճառել էր մի քանի անգամ, վարչապետն ասաց.

«Մեզ ապագայում նման ռիսկեր սպասվո՞ւմ են, որ նոր դեպքեր բացահայտվեն անբարեխիղճ կառուցապատողների կողմից»: Ֆինանսների նախարար **Վաչե Գաբրիելյանն** ասաց, որ իրենք արդարադատության նախարարությունից առաջարկ են ստացել, սակայն վարչապետն ընդհատեց նախարարին՝ հավելելով, որ հստակ պատասխան է ակնկալում: *Տես էջ 3*

## Բաքվի շնորհակալությունը Անկարային

**Նախորդ համարում տեղեկացրել էինք Երեւան-Վան թռիչքը վերջին պահին չեղյալ հայտարարելու թուրքական կողմի որոշման մասին: Թեեւ CNN-turk-ը որոշմանն անդրադարձել էր ապրիլի 2-ին, սակայն դա ընդունվել է մարտի 30-ին, իսկ պատասխանը չի ուշացել: Թուրքական էլեկտրոնային մամուլի վկայությամբ՝ երեկ Բաքուն, ի դեմս արտգործնախարարության խոսնակ Էլման Աբդուլաեւի, թռիչքը չեղյալ հայտարարելու առթիվ շնորհակալություն է հայտնել Անկարային:**

**Աբդուլաեւն ասել է. «Թռիչքի հարցում Ադրբեջանը որոշակի առարկումներ ուներ: Թեեւ դա իրականացնելու էր մասնավոր մի ավիաընկերություն, սակայն քաղաքական եւ տնտեսական պայմանները հակասում էին դրա իրականացման տրամաբանությանը: Հայաստանը օկուպանտ երկիր է, բռնազավթել է Ադրբեջանի հողերը: Այս իրավիճակում խիստ կարեւոր է Ադրբեջանի ռազմավարական գործընկեր եղբայրական Թուրքիայի դիրքորոշումը: Կարեւոր է, որ Թուրքիան ճնշում գործադրի Հայաստանի վրա: Մենք մշտապես զգում ենք Թուրքիայի աջակցությունը եւ դրա համար շնորհակալություն ենք հայտնում Անկարային»:**

**Ի դեպ, Ադրբեջանի նախագահի խորհրդականներից Ալի Հասանովը Երեւան-Վան թռիչքը լրագրողների ներկայությամբ բնութագրել էր «զավթիչներին սատարում», իսկ մասնավոր ավիաընկերությունը բավարարվել էր թռիչքը չեղյալ հայտարարելու որոշման մասին իրազեկելով, բայց չէր պատճառաբանել: Ակնհայտ է, որ խնդիրը ավիաընկերությունը չէ, այլ՝ թուրքական իշխանությունները, որոնք, պարտադրելով չեղյալ հայտարարելու որոշումը, փաստորեն սահմանափակել են ավիաընկերության գործունեությունը, ոտնահարել նրա ազատ գործելու իրավունքը:** Հ. Չ.

## Համացանցի նոր վիրուսը քողարկվում է իբրեւ Facebook-ի էջ

**Կալիֆոռնիայի փորձագետները համացանցից օգտվողներին նախազգուշացրել են, որ հայտնվել է նոր վիրուս, որն իրեն ներկայացնում է իբրեւ Facebook սոցիալական ցանցի էջ:**

**Մասնագետների տվյալներով, ծրագիրն էկրանի վրա պահանջում է նույնականացման ստուգում, եւ կոճակը սեղմելիս օգտատերը ինքնաբերաբար տեղափոխվում է սոցիալական ցանցի կեղծ էջ, որտեղ գրում է էլեկտրոնային հասցեն եւ ծածկագիրը:**

**Նույն պահին կիբեռհանցագործները վերահասցեագրում են գործընթացը եւ մուտք գործում օգտատիրոջ անձնական տվյալների եւ նրա անհատական էջում բեռնավորված տեղեկությունների մեջ: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ նոր վիրուսն ակտիվանում է համակարգի յուրաքանչյուր միացման դեպքում, բարդացնելով իր հեռացման պրոցեսը:**

**Բացի դրանից, նկատվել է, որ համացանցի վիրուսով վարակված օգտատերերի անունից ինքնաբերաբար հղումներ են ուղարկվում ախտահարված կայքէջերին:**

## Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Երեւանյան անդրանիկ հյուրախաղից առաջ: Ակնարկ Վիեննայի սիմֆոնիկ նվագախմբի անցյալին ու ներկային:

Խորհրդահայ պոեզիայի «գոհարներից». «Ստալինը սովետահայ պոեզիայում» 1949 թ. երեւանյան հրատարակությունը ըստ Ավիկ Իսահակյանի «Արեւածագից արեւամուտ» հրապարակման:

Վահրամ Փափազյանի ծննդյան 125-ամյակին: Մանչեստրահայ Հովհաննես Թաքուլյանի հուշագրությունը: Հանդիպում մեծանուն արտիստի դստեր հետ՝ Փափազյանի լենինգրադյան ամառանոցում - «Օլգինոյի տնակը»:

Ի հիշատակ սփյուռքահայ բանաստեղծ, մշակույթի գործիչ Վարդգես Կարագյոզյանի: Ալեքսանդր Թոփչյան. «Ապերախտ լռություն»:

Երիտասարդ նկարիչ Արշակ Սարգսյանի նորընծա (անգլերեն) ալբոմի՝ Վարդան Ջանոյանի առաջաբանը:

Արձագանքներ՝ փետրվարի 9-ի այս էջերում տպագրված Արգամ Այվազյանի «Խելքի աշեցեք» հոդվածի: **Մ. Բ.**

## Երկու կասկածյալ Պռոշյանի գյուղապետի սպանության գործով

Ըստ Հայաստանի ոստիկանության կայքէջի՝ ապրիլի 2-ին Կոտայքի մարզի Պռոշյան գյուղում կատարված նույն գյուղի գյուղապետ Հրաչ Մուրադյանի սպանության փաստով հարուցված քրեական գործով երեկվա դրությամբ կար երկու կասկածյալ՝ Պռոշյանի բնակիչներ, 1980 թ. ծնված Արտակ Պետրոսյանը եւ 1982 թ. ծնված Արայիկ Պետրոսյանը:

Հանցագործության կատարմանը նրանց մասնակցությունը հիմնավորելու կամ հերքելու ուղղությամբ օպերատիվ-քննչական գործողությունները շարունակվում են:

## Իրական մեղավորները դեռեւս անպատիժ են

Դեռեւս անցյալ տարվանից պարզ էր, որ Ազգային գրադարանում կատարված վերանորոգման ընթացքում եղել են «ատկատներ»: Սկզբում մամուլը հրապարակեց, թե հափշտակումների գումարները կազմել են 700 միլիոն դրամ, սակայն հետագայում այս թիվը հերքվեց եւ հրապարակվեց, որ եղել է 20 միլիոն դրամի հափշտակում: Սակայն նա, ով պատասխանատու էր գումարի ճիշտ օգտագործման համար եւ պետք է պատժվեր, մահացել է:

Փաստաբան Ալեքսանդր Սիրունյանը երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց, որ պատասխանատվության ենթարկելու եւ պատժելու համար հիմա ձերբակալված է մի մարդ, որն «ատկատների» հետ ընդհանրապես կապ չունի: Ձերբակալվածը քաղաքաշինության նախարարությունից Գոռ Քամալյանն է, սակայն, ըստ փաստաբանի, նա մեղավոր չէ: Նա, ով պետք է իրապես պատժվեր, մահացել է, իսկ մյուս մեղավորներին պետք է փնտրել այն ՍՊԸ-ում, որը կատարել է գրադարանի վերանորոգումը: Ըստ փաստաբանի՝ չի բացառվում, որ քաղաքաշինության նախարարությունում էլ մեղավորներ կլինեն, սակայն Գոռ Քամալյանը գործի հետ միանգամայն կապ չունեցող մարդ է:

Ալեքսանդր Սիրունյանը տեղեկացրեց, որ Գոռ Քամալյանին առաջադրվել է պաշտոնական դիրքի չարաշահման մեղադրանք, սակայն վերջինս մեղադրանքը չի ընդունում, գործն էլ դատարան չեն ուղարկում, եւ այսպես կալանավորված պահում են Գոռ Քամալյանին՝ փորձելով հասնել նրան, որ վերջինս ընդունի ուրիշների կատարած մեղքը: **Ի. Պ.**

# Իրանն առաջարկում է, որ Սիրիայում դադարեն բախումներն ու ընտրություններ անցկացվեն

Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) արտաքին գործերի նախարար Ալի Աքբար Սալեհին ապրիլի 9-ին ներկա կգտնվի ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի երդմնակալությանը: Հայաստանում է ԻԻՀ արտաքին գործերի նախարարության խոսնակ, հանրային դիվանագիտության եւ մամուլի գլխավոր վարչության ղեկավար Ռամին Մեհմանփարաստը, որը Հայաստանում Իրանի դեսպանի եւ այլ պաշտոնյաների ու իրանցի լրագրողների հետ հանդիպել է արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանին, սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանին:



**Մեհմանփարաստի** գնահատմամբ՝ հայ-իրանական քաղաքական հարաբերությունները գտնվում են շատ բարձր դիրքի վրա. ժամանակն է լուրջ աշխատանք կատարելու, որպեսզի այլ ոլորտներում էլ նման մակարդակ գրանցվի: Մեհմանփարաստը հավաստիացնում է, որ այս հարցում լուրջ դերակատարություն կարող են ունենալ նաեւ լրագրողները, որոնց հաճախակի այցելությունները ու հարեւան երկրների մասին հոդվածները երկու երկրների հասարակություններին առավել լայն տեղեկատվություն կտրամադրեն:

Ռամին Մեհմանփարաստը շեշտում է, որ իրենք ցանկանում են հաստատել լավ հարաբերություններ տարածաշրջանի երկրների հետ՝ Հայաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի եւ Իրաքի հետ լավ հարաբերությունները օրակարգային են Իրանի արտաքին քաղաքականությունում:

Անդրադառնալով ԼՂՀ հակամարտությանը՝ իրանցի պաշտոնյան նշում է, որ հարցը կարգավորվում է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում:

«Եթե Հայաստանն ու Իրանը դիմեն մեզ որպես միջնորդի, ապա մենք մեր տեսակետը կհայտնենք, սակայն երբ հարցը այլ ձեւաչափով է քննարկվում, մենք միայն հաջողություն ենք մաղթում եւ հավելում, որ Իրանը ԼՂՀ հակամարտության խնդրի լուծումը տեսնում է միայն քաղաքական ճանապարհով», ասաց Մեհմանփարաստը:

«**Ազգ**»-ի թղթակիցը հնարավորություն ունեցավ մի քանի հարց ուղղելու իրանցի պաշտոնյային, պատասխանները ներկայացնում ենք ստորեւ:

Խոսելով Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունների մասին՝ Մեհմանփարաստը նշեց, որ Սիրիայի ժողովուրդն ունի պահանջներ, ու դրա համար էլ սկսվեց այդ շարժումը: «Եթե ժողովուրդը ունի պահանջներ, ապա իշխանությունը պետք է դրանք հարգի: Սակայն ինչպե՞ս պետք է որոշել՝ ժողովրդի մեծամասնությունն ի՞նչ է ուզում: Հետեւաբար, այս իրավիճակին լուծում տալու համար մենք առաջարկում ենք, որ բախումները դադարեցվեն, զենքի ներթափանցումն ու վաճառքը դադարեցվեն, Սիրիայում սկսվի ազգային երկխոսություն, կազմավորվի անցումային կառավարություն, անցկացվեն չեզոք ընտրություններ: Այս ամենից հետո ամբողջ աշխարհը պետք է ընդունի սիրիացի ժողովրդի ընտրյալ նախագահին: Սակայն որոշ երկրներ այլ դիրքորոշում ունեն: Նրանք չեն ցանկանում, որ սկսվի ազգային երկխոսություն, որ բախումները դադարեն եւ սկսվեն ընտրություններ: Դրա փոխարեն, նրանք զենք են տրամադրում ընդդիմության ներկայացուցիչներին, ինչն էլ իր բողոքն արտահայտում է ահաբեկչություններ կազմակերպելով: Այս ամենի հետեւանքով խաղաղ բնակիչներ են զոհվում: Սակայն եթե ընդդիմությունը համոզված է, որ մեծամասնությունն իր կողմից է, ապա ինչո՞ւ է գնում ահաբեկչության ճանապարհով եւ չի ընտրում ընտրության ուղին: Չէ՞ որ ընտրական ճանապարհով իրենք ավելի շուտ կհասնեն արդյունքի, իսկ եթե ոչ՝ կնշանակի, որ մեծամասնությունը կողմ է ներկայիս իշխանությանը, ուստի ոչ մի երկիր իրավունք չունի իր կարծիքը պարտադրելու սիրիացի ժողովրդին:

Ես կարծում եմ՝ որոշ երկրների չի հետաքրքրում ժողովրդավարությունը կամ Սիրիայի ժողովրդի ցանկությունը: Նրանց հետաքրքրում են սեփական շահն ու քաղաքական նպատակները: Նրանց չի հետաքրքրում, որ բախումները դադարեն ու ժողովուրդը քիչ վնաս կրի: Սիրիական ընդդիմությունն այսօր հասկացավ, որ չի կարողանում ռազմական ճանապարհով խնդիրը լուծել, եւ դրա համար դիմեց քիմիական զենքին: Սակայն ստացվում է մի իրավիճակ, երբ երկրում ինչ-որ մի հատված, որ դեմ է կառավարությանը, կարող է զենք վերցնել ու սկսել պատերազմ: Դա նշանակում է, որ տարածաշրջանում բոլոր երկրները պետք է զինվեն: Ստեղծվում է վտանգավոր նորմա, հենց այդ պատճառով զենքը չի լեգիտիմացնում նրանց: Լեգիտիմը բնակչության մեծամասնության քվեն է», ասում է նա:

Անդրադառնալով Իրան-Արեւմուտք հարաբերություններին՝ Մեհմանփարաստը նշեց, որ լարված հարաբերությունները ԱՄՆ-ի եւ արեւմտյան մի քանի երկրների հետ պայմանավորված են այն հանգամանքով, որ երկար տարիներ իրենք են թշնամանք ունեցել Իրանի նկատմամբ:

«Եթե նրանք մի կողմ դնեն իրենց թշնամանքը եւ զղջան նախկին արածների համար, միգուցե երկխոսության եւ հարաբերությունների զարգացման դաշտ ստեղծվի: Անարդարացի, ոչ իրավական եւ անտրամաբանական է այն պատժամիջոցների համակարգը, որ Արեւմուտքը կիրառում է Իրանի դեմ: Այդ լարված հարաբերությունները պայմանավորված են Իրանի միջուկային ծրագրով, սակայն մենք բազմիցս հայտարարել ենք, որ այդ ծրագիրը բացառապես միջուկային էներգիայի խաղաղ կիրառում է ենթադրում: Մենք դեմ ենք միջուկային զենքի կիրառմանն, ու նրանք, ովքեր մտահոգված են միջուկային զենքի օգտագործմամբ, իրենք ունեն միջուկային զենքեր: Աշխարհում մոտ 20 000 միջուկային մարտագլխիկներ կան, կեսը պատկանում է ԱՄՆ-ին: Իրանն առաջին երկրներից է, որ ստորագրել է միջուկային զենքի չտարածման պայմանագիրը: Աշխարհում միայն ԱՄՆ-ն է միջուկային զենք կիրառել, կոտորել հազարավոր ճապոնացիների», ասաց իրանցի պաշտոնյան՝ հավելելով, որ շուտով կվերսկսեն 5+1 ձեւաչափով բանակցությունները, եւ իրենք ակնկալում են տրամաբանական մոտեցումներ:

Անդրադառնալով մեծ աղմուկ հանած օսկարակիր «Արգո գործողություն» ֆիլմին, Մեհմանփարաստն ասաց, որ ԱՄՆ-ն արդեն 60 տարի նման քայլի է դիմում: «Իրենք ունեն հզոր մեդիա եւ օգտագործում են այդ հնարավորությունները եւ քաղաքական նպատակներ հետապնդելով ատելություն են սերմանում մի երկրի կողմից մեկ այլ երկրի դեմ: Եթե «Հոլիվուդում» որեւէ մեկը ցանկանում է «Օսկար» ստանալ, ապա պարտադիր պետք է հակաիրանական ֆիլմ նկարի: Մինչդեռ Իրանը 7000 տարվա պատմություն եւ 2500 տարվա պետականություն ունի, կան երկրներ, որ 250 տարվա պատմություն էլ չունեն: Մեր ժողովրդի մեծության դեմ ավելի խոհեմ վերաբերմունք է պետք»,- ասաց նա՝ հավելելով, որ խորհուրդ կտա լուրջ չվերաբերվել այդ ֆիլմին»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Խոսրովի անտառ» պետական արգելոցը կարժանանա եվրոպական դիպլոմի

ՀՀ բնապահպանության նախարարության լրատվության բաժնից «**Ազգին**» տեղեկացրին, որ «Խոսրովի անտառ» պետական արգելոցը նախարարության կողմից ներկայացվել է եվրոպական դիպլոմի: Դեռեւս 2011 թվականին այդ ուղղությամբ աշխատանքներ էին սկսվել «Բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող պոտենցիալ տարածքների նույնականացման ծրագրի իրականացում՝ «Էմերալդ ցանցը» Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

Այն ֆինանսավորվել է Եվրոխորհրդի կողմից՝ որպես «Բեռնի կոնվենցիայի» գործողություն, որի նպատակներից է Հայաստանի որեւէ պահպանվող տարածքի միջազգային գնահատումը եւ, համապատասխանելիությունը ապահովելու դեպքում, նաեւ կարգավիճակի ներկայացումը: Որպես այդպիսին նախարարության կողմից ընտրվել է«Խոսրովի անտառ» պետական արգելոցը:

Հանձնաժողովն ընդունել է ազգային զեկույցը եւ 2012-ի ապրիլ ամսին Հայաստան է գործուղել իր անկախ փորձագետին՝ Հերվե Լեթյերին՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի առկա վիճակի եւ ներկայացվող հայցին համապատասխանելու վերաբերյալ անկախ գնահատում իրականացնելու եւ զեկույց պատրաստելու նպատակով:

Եվրոխորհրդի փորձագետը «Խոսրովի անտառ» արգելոցում նախ կազմակերպել է պահպանվող տարածքներին ներկայացվող եվրոպական չափանիշներին ու պահանջներին վերաբերող 2-օրյա աշխատանքային սեմինար, որին մասնակցել են նախարարության, արգելոցի, «ԲՕԻԳ» ՊՀ-ի, համայնքների եւ ՀԿ-ների ներկայացուցիչներ, ապա՝ 3 օր ինքնուրույն, առանց հայ մասնագետների միջամտության, ուսումնասիրություններ է իրականացրել արգելոցում:

Եվրոխորհրդի «Փորձագետների խորհրդի մասնագիտական հանձնաժողովը» հավանություն է տվել զեկույցին եւ կայացրել որոշում՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի եվրոդիպլոմի հայցը ներկայացնելու կոնվենցիայի բյուրոյի քննարկմանը:

Դիպլոմը տրվում է մինչեւ 5 տարի ժամկետով, որը թարգմանվում է Եվրոխորհրդի աշխատանքային 2 լեզուներով՝ անգլերեն եւ ֆրանսերեն, եւ շուտով կհանձնվի «Խոսրովի արգելոցին»՝ Եվրոխորհրդի ներկայացուցչի կողմից:

Պատվիրակությունն աշխատել է նաեւ Եվրոխորհրդում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչության հետ, համաձայնություն է ձեռք բերվել հետագա գործողությունների իրականացման վերաբերյալ:

Այս աշխատանքներին աջակցել է «Անդրսահմանային միացյալ քարտուղարությանը» (TJS), որը նախարարության կողմից մեծապես կարեւորվում է:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՅԼԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

# Խոստովանություն

Երբ փորձում էի հասկանալ, թե ինչ թեմայով է կարելի հռետորական ելույթ պատրաստել, հասկացա, որ պետք է գրել այն երեւույթի ու զգացմունքի մասին, որը քեզ հարազատ է, որի մասին կարող ես ազատորեն խոսել: Իսկ ես տվյալ պահին կարոտ էի զգում... կարոտ ինձ համար անծանոթ ծանոթների նկատմամբ:

«Անծանոթ ծանոթներ» ասելով նկատի ունեմ այն մարդկանց, որոնց ամեն օր հանդիպում եմ նույն ժամին, նույն տեղում. փողոցում, համալսարանում ու տրանսպորտում: Նրանց հետ չեմ զրուցում, չեմ պատմում իմ կյանքում եղած դժվարությունների եւ ուրախությունների մասին, եւ ոչ էլ ինքս նրանց կյանքից որեւէ մանրամասն գիտեմ, բայց բավական է միայն այն, որ այդ անծանոթը իմ կողքին է, ես զգում եմ նրա շունչը, տեսնում նրա աչքերի ու դեմքի արտահայտությունը:

Ընդամենը մի քանի օր այդ անծանոթին չտեսնելու դեպքում կարոտում եմ՝ որպես շատ հարազատ մարդու, ուզում եմ տեսնել, նորից կողքիս զգալ նրա ներկայությունը: Գուցե դուք ինձ «տարօրինակ մարդ» անվանեք, բայց մի՞թե անհնար է սիրել անծանոթ մի մարդու կամ էլ թափառական շան, արեւը... Մի՞թե դժվար է փոքրիկ սրտում մի փոքր անկյուն հատկացնել նրանց: Գուցե նրանց հարկավոր էլ չէ քո սերը, բայց դժվար չէ, չէ՞, սիրելը, ուրեմն ինչո՞ւ չսիրել... Հատկապես երբ դու ինքդ էլ սիրո կարիք ես զգում եւ Աստծուն էլ խնդրում ես քեզ օգնել երջանիկ զգալ: Իսկ եթե երջանկության հասնելու միակ ճանապարհը կոչվում է «սե՛ր»...

Ուրեմն եկեք սիրենք, սիրենք անծանոթներին, մուրացկաններին, հանցագործներին, եւ ավելի շատ նրանց, որոնց քչերն են սիրում: Այդ ժամանակ հնարավոր է, որ դու քեզ երջանիկ զգաս, չէ՞ որ դու մեծ բարերար ես: Բոլորին տալիս ես ամենակարեւորը:

Դա կօգնի նաեւ քեզ հասկանալու, որ այս կյանքում ավելի բարձր արժեքներ կան, քան դեղին մետաղն է, թանկարժեք մեքենան ու քաղաքի կենտրոնում գտնվող բնակարանը:

Սիրենք մեկմեկու... Եվ դա արեք թեկուզ անձնական շահից դրդված:

ԼԻԼԻԹ ՍԱՄՎԵԼՅԱՆ
ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշուապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Երջանիկ գաղթականների երկիր»

Հասարակական կարծիքի ուսումնասիրման միջազգային Gallup կենտրոնի ուսումնասիրությունների տվյալներին, մեզանում, որպես կանոն, կասկածում է ընդդիմությունը: Օրինակ, երբ հիշյալ կազմակերպությունը նախագահական (կամ որեւէ այլ) ընտրություններից առաջ հրապարակում է իր ուսումնասիրությունների արդյունքները, որ գործող նախագահը կամ իշխանությունը վերընտրվելու են, ընդդիմությունն անմիջապես արձագանքում է «բացահայտ կեղծիքին», կամ երբ նույն Gallup-ի ոչ վաղ անցյալի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ «Հայաստանում բնակչության մեծ մասն իրեն երջանիկ է համարում», այս փաստը եւս ոչ միանշանակ ընդունվեց քաղաքական ընդդիմության եւ հասարակական տարբեր կազմակերպությունների շրջանակներում:



Այսպիսով, եթե հավատանք Gallup-ին, ապա ստացվում է, որ Հայաստանում շատերս մեզ համարում ենք երջանիկ, ու, թերեւս, ինչի արդյունքում էլ իշխանությունը մշտապես ունենում է վերընտրվելու ամենաբարձր հնարավորությունները: Սա տրամաբանական է. երկրներում, որտեղ մարդկանց մեծամասնությունն իրեն երջանիկ է զգում, իշխանություն չեն փոխում:

Միեւնույն ժամանակ, անցյալ ընտրություններում, ըստ պաշտոնական տվյալների, Սերժ Սարգսյանին ձայն չտվեցին ընդհանուր քվեարկողների քառասուն տոկոսից քիչ ավելին (Րաֆֆի Հովհաննիսյանի, Հրանտ Բագրատյանի, Պարույր Հայրիկյանի, Անդրիաս Ղուկասյանի, Արման Մելիքյանի եւ Վարդան Սեդրակյանի օգտին քվեարկողները): Հենց այս խորհրդանշական «քառասուն տոկոսի» մասին էլ կխոսենք` շարունակելով ներկայացնել Gallup-ի բոլորովին այլ ուսումնասիրության արդյունքը: Մասնավորաբար` հասարակական կարծիքի ուսումնասիրման միջազգային այս կազմակերպությունը հարցում է անցկացրել նախկին ԽՍՀՄ 12 երկրների 15-ից բարձր տարեկան 41.072 քաղաքացիների միջեւ` պարզելու հայրենիքից ընդմիշտ հեռանալու ցանկությունն ու դրա պատճառները: Ըստ այդմ, Հայաստանը առաջին տեղում է նախկին միութենական 12 հանրապետությունների միջեւ` ըստ հայրենիքից ընդմիշտ հեռանալ ցանկացող քաղաքացիների թվի: Մեր երկրում, ըստ հարցումների, 40 տոկոսը ցանկանում է ընդմիշտ հեռանալ հայրենիքից, երբ, օրինակ, Ուզբեկստանից ցանկանում է ընդմիշտ հեռանալ ուզբեկներ միայն 5 տոկոսը: Վրաստանից ու Ադրբեջանից ընդմիշտ հեռանալ ցանկացողները 14-ական տոկոս են: Այսպիսով ստեղծվում է պատկեր, որի համաձայն, մեր երկրում մեծամասնությունը երջանիկ է, հենց այդ երջանիկ մեծամասնությունը ամեն անգամ ընտրություններին քվեարկում է իշխանության, կամ դրա թեկնածուի օգտին, իսկ մնացյալը`... պարզապես ցանկանում են ընդմիշտ հեռանալ երկրից. ոմանք դրա համար ունեն միջոցներ, մյուսները` միայն ցանկություն:

Ուշագրավ է նաեւ, որ հարցման մասնակիցները հայրենիքը ընդմիշտ լքել են ցանկանում առավելաբար «սեփական կենսամակարդակը բարելավելու համար», երկրորդ ծանրակշիռ պատճառը «երեխաների ապագան» է, իսկ այնպիսի «ծիծաղելի բան»` ինչպիսին է մարդու իրավունքների ավելի լավ պաշտպանված երկրում ապրելը, որպես հայրենիքն ընդմիշտ լքելու հիմնական պատճառ, նշել է հարցումների մասնակիցների միայն 3 տոկոսը: Ստացվում է, որ մարդիկ կոնկրետ Հայաստանից չեն ցանկանում ընդմիշտ հեռանալ, որովհետեւ այստեղ մարդու իրավունքները լավ չեն պաշտպանվում կամ այստեղ բնապահպանական խնդիրները լավ չեն լուծվում, այլ որովհետեւ ցանկանում են լավ ապրել եւ ավելի լավ պայմաններում մեծացնել իրենց երեխաներին: Նման մարդիկ, հիշեցնենք, Հայաստանում կազմում են 40 տոկոս, ավելի շատ, քան նախկին ԽՍՀՄ որեւէ այլ երկրում...

Պարզապես անորոշ է մնում, թե ինչպե՞ս կարող է մի երկրի բնակչության մեծամասնությունը իրեն երջանիկ համարել, իսկ էական փոքրամասնությունը ձգտել ընդմիշտ հեռանալու, եւ սրան զուգահեռ, անորոշ ու հետաքրքրական է մնում, թե ինչպե՞ս կարող է Gallup-ը մի հարցում սուբյեկտիվ անցկացնել, մյուսը` օբյեկտիվ. եթե միջազգային կազմակերպությունը իրավացի է, որ Հայաստանն ընդմիշտ լքել են ցանկանում 40 տոկոս հայաստանցիներ, ուրեմն իրավացի է նաեւ նրանում, որ Հայաստանում մեծամասնությունն իրեն երջանիկ է համարում, եւ ընտրում է իշխանությանն ու դրա թեկնածուին: Կամ էլ, իհարկե, հասարակական կարծիքի ուսումնասիրման միջազգային կազմակերպություն Gallup-ը իրավացի չէ եւ ոչ մի հարցում:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՀԱՅՈՑ ԱՆՊԱՏՍԱՐԱԳ ԵԿԵՂԵՑԻՆ

# Բաց նամակ Արամ արքեպիսկոպոս Աթէշեանին

Կարելի՞ է երեւակայել որ Ս. Զատկուան առիթով Պատարագ տեղի չունենայ Տիգրանակերտի (Դիարպեքիր, Թուրքիա) վերանորոգուած Ս. Կիրակոս եկեղեցւոյ մէջ: Մամուլին մէջ տրուած է սա բացատրութիւնը, թէ նկատի ունենալով, որ բոլոր եկեղեցականներն ալ Ս. Զատկուան տօնին առիթով զբաղած էին իրենց ծխական եկեղեցիներով, կարելի չէր եղած եկեղեցական մը ուղարկել Ս. Պատարագ մատուցանելու համար: Յաւելեալ եկեղեցականի չգոյութիւնը ոչ մէկ արդարացուցիչ պատճառ ունի, եւ միանգամայն ծիծաղելի ու դատապարտելի է: Կրնա՞յ ըլլալ, որ Ամենայն հայոց կաթողիկոսութեան տրամադրութեան տակ պատրաստ եկեղեցական չկար, կամ Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան տրամադրութեան տակ եկեղեցական չկար այդ նպատակով Տիգրանակերտ ուղղուելու: Կրնա՞յ ըլլալ, որ սփիւռքի տարածքին եկեղեցական մը չէր գտնուեր, որ պիտի փափաքէր անմիջապէս մեկնիլ Տիգրանակերտ եւ այդտեղ յագեցնել պապակեալ ժողովուրդին հոգեւոր կարիքները, այդ ալ` այսպիսի մեծ սրբազան տօնի մը առիթով:

Կարելի՞ է երեւակայել ասկէ աւելի յարմարագոյն առիթ մեր ոտքերը ամրացնելու այն հողերուն վրայ, ուրկէ տակաւին երէկ էր կարծես, որ կոտորուած ու աքսորուած էինք: Այսօր, երբ Տիգրանակերտի քաղաքապետը լայնասարած ձեռքերով մեզ կը հրաւիրէ վերադառնալու մեր պապենական հողերը` բարձրաձայն յայտարարելով` «այս հողերը ձե՛ր ալ հողերն են, վերադարձէ՛ք ձեր հայրերու հազարամեայ երկիրը», կրնա՞յ ըլլալ, որ մեր ականջները խուլ են եւ չեն լսեր այս բացառիկ կոչերը, հոգ չէ թէ անոնք ունենան քաղաքական թաքուն նպատակներ: Այս է Հայ դատի հետապնդումը, որուն մասին կը խօսինք յաճախ առանց լուրջ գործնական կազմակերպեալ քայլերու:

Ե՞րբ պիտի սորվինք ճիշդ ժամուն եւ ճիշդ տեղին գործածել մեզի ընծայուած առիթներն ու պատեհութիւնները: Կրնա՞ր ըլլալ ասկէ աւելի մեծ բացառիկ առիթ մը ցուցադրելու մեր հաւատարմութիւնն ու զօրակցութիւնը մեր տառապեալ, -թէկո՛ւզ ծպտուած եւ դաւանափոխուած,- եղբայրներուն եւ քոյրերուն, որոնք թաքուն պահելով իրենց հայեցիութիւնը, այսօր հպարտօրէն պիտի ուզէին Քրիստոսի յարութեան տօնին հետ յարութիւն տալ նաեւ իրենց ներքին հպարտութեան եւ բացականչել. «Մեռած էինք, բայց յարութիւն առինք` հաւատալով Յարուցեալին, եւ այսօր մեր մեռելներու յիշատակին` կը պահանջենք արդարութիւն»:

Ո՛հ, որքա՜ն պիտի հպարտանային Տիգրանակերտի եւ շրջակայքի մեր հայրենակիցները, եթէ արթնամտութիւնը ունենայինք նախօրօք լրջօրէն պատրաստուելու Ս. Կիրակոս եկեղեցւոյ զանգակները հնչեցնելու յընթացս Ս. Պատարագի, որպէսզի քրդական մամուլը անգամ մը եւս անդրադառնար, որ Հայը չէ՛ մեռած, հակառակ ամէն տեսակի ստորնացման, բռնութեան, աքսորի, սովի եւ մահուան բոլոր սպառնալիքներուն, եւ յարուցեալ իր Տիրոջ նման, ճակատաբաց կը կանգնի որպէս պահանջատէր իր արդար իրաւունքներուն եւ իր հազարամեայ պապենական հողերուն:

Կրկնակի ամօթալի եւ ընդվզեցուցիչ երեւոյթ է կարդալ քրդական «Հիւրրիէթ» թերթին մէջ հետեւեալը. «Հայ համայնքը 98 տարիներ ետք հնչեցուց Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղեցւոյ զանգակները Ս. Զատիկի առիթով, բայց եւ այնպէս չկրցաւ Ս. Պատարագի արարողութիւն ունենալ եկեղեցականի բացակայութեան պատճառով»...: Թերթը կը նշէ նաեւ, որ վերջերս նորոգուած եկեղեցիին վրայ ծախսուած էր $3,200.000 եւ պղնձեայ զանգակն ալ բերուած էր Ռուսաստանէն: Որպէս թէ Պոլսոյ պատրիարքարանը նախօրօք յայտնած էր տիգրանակերտցիներուն, որ առնուազն շաբաթ մը պէտք էր պաշտօնապէս Տիգրանակերտ հասնելու: Որքան ծիծաղելի...: Կրնայինք 48 ժամէն Ամերիկայէն նոյնիսկ եկեղեցական հասցնել, երգչախումբն ալ միասին, մեր տեղական ծախսերով:

Ինչպէ՞ս կրնանք թոյլատրել այսպիսի ճակատագրական սխալ մը, երբ օդային գիծով Լիբանանը երկու ժամ հեռաւորութեան վրայ է Տիգրանակերտէն, իսկ Հայաստանը` մէկ ժամ: Կան նաեւ սփիւռքի մեր միւս թեմերը, ուր կ՚ապրին եւ կը գործեն բազմաթիւ եկեղեցականներ եւ ոմանք ալ հանգստեան կոչուած: Կրնա՞յ ըլլալ որ Պոլսոյ պատրիարքական փոխանորդը չմտածեց դիմել վերեւ յիշուած աղբիւրներուն եւ եկեղեցականի մը ներկայութիւնը ապահովել: Ես պիտի ուզէի աւելին տեսնել եւ կրկնակի հպարտանալ. ի՞նչն է որ մեզ կը կասեցնէր, որ չկրցանք երգչախումբ մը ղրկել այդտեղ եկեղեցականի մը ընկերակցութեամբ եւ թնդացնել Հայ եկեղեցւոյ շարականները վերանորոգուած Ս. Կիրակոս եկեղեցիի կամարներուն ներքեւ, եւ հպարտօրէն աղաղակել. «Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ եւ երկնաւոր. քեզ աւետիք խնդութեան հարսն ի յերկրէ եկեղեցի. Օրհնեա՛ ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիոն»:

ՈՍԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ
ԱՄՆ

# Արթուր Բաղդասարյանն ընդունել է Լեհաստանի դեսպանին

**Անդրադառնալով մարտի 26-28-ը իր գլխավորած պատվիրակության` Լեհաստանի Հանրապետություն կատարած այցին` ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդգծել է, որ իր հանդիպումները Լեհաստանի նախագահ Բրոնիսլավ Կոմորովսկիի, Լեհաստանի Սենատի նախագահ Բոգդան Բորուսեւիչի, Ազգային անվտանգության բյուրոյի ղեկավար Ստանիսլավ Կոզիեյի եւ մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ եղել են առավելապես արդյունավետ եւ մեծապես կնպաստեն մի շարք ոլորտներում հայ-լեհական կապերի խորացմանը:**

**Արթուր Բաղդասարյանը մանրամասնեց, որ Լեհաստանում իր հանդիպումների ընթացքում քննարկվել են Հայաստանի եւ Լեհաստանի միջեւ հարաբերությունների զարգացմանը եւ ընդլայնմանը, տնտեսական համագործակցության հեռանկարներին, անվտանգության ոլորտում հայ-լեհական համագործակցության ներկա վիճակին ու հետագա խորացման հնարավորություններին վերաբերող հարցեր: Որպես թիրախային ուղղություն կարեւորվել է ռազմական արդյունաբերության զարգացումը, որի առաջին քայլերից էր Վարշավայում «Լյուբավա» ընկերության եւ ՀՀ պաշտպանության նախարարության Չարենցավանի հաստոցաշինական գործարանի միջեւ ստորագրված հայ-լեհական համատեղ ձեռնարկություն ստեղծելու համաձայնագիրը:**

**Վարշավայում ձեռք են բերվել մի շարք այլ կոնկրետ պայմանավորվածություններ, մասնավորապես Հայաստանում կձեւավորվի հայ-լեհական առեւտրաարդյունաբերական պալատ:**

# Վարչապետ. «Հայաստանի թիվ մեկ խնդիրը զբաղվածությունն է»

*1-ին էջից*

«Կա՞ն կառուցապատողներ, ովքեր քաղաքացիների փողերը հավաքել են, բայց ի վիճակի չեն լինելու կատարել շահառուների նկատմամբ իրենց պարտավորությունները»: Երեւանի փոխքաղաքապետ **Կամո Արեյանը** հավաստիացրեց, որ այսօրվա դրությամբ նման ռիսկեր չկան, սակայն վարչապետն ասաց, որ ի տարբերություն Արեյանի ինքն ամեն օր ստանում է ահազանգեր, համաձայն որոնց` կան կառուցապատողներ, ովքեր գումար ստանալու համար դիմում են բանկերին, որպեսզի կարողանան ավարտին հասցնել իրենց անավարտ շինարարությունը: «Դա նշանակում է, որ այդ մարդիկ քաղաքացիների գումարները հավաքել են, բայց շինարարությունն ավարտին հասցնելու համար այդ գումարները բավարար չեն»: Խոսակցությանը միջամտած տրանսպորտի եւ կապի նախարար **Գագիկ Բեգլարյանը** հղում անելով հիշողությանը, ասաց, որ նման ռիսկեր կան նաեւ Գլխավոր պողոտայում: Բեգլարյանը խոստացավ նաեւ հասցեներ տալ: Վաչե Գաբրիելյանն էլ հիշեց, որ նման ռիսկեր կան նաեւ Արաբկիրում:

«Հիմա դրանց դեմը ո՞նց առնենք», հարց ուղղեց վարչապետը: Կառավարության ղեկավարը կարծում է, որ եթե ինչ-որ մեկը հրապարակային մարդկանցից գումար է հավաքում բնակարան ձեռք բերելու կամ դրսից մեքենա բերելու համար, ապա այդ գործընթացը պետք է օրենքով վերահսկվի: Տիգրան Սարգսյանը քաղաքացիներին կոչ արեց, որ խուսափեն նման գործարքներից, եթե չկա նոտարական վավերացում, պայմանագրեր չկնքեն: Վարչապետը նաեւ հանձնարարեց, որ կառավարությունում այս հարցով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովը կանխարգելիչ միջոցառումներ իրականացնի, որպեսզի «Վաղը, մյուս օրը այդպիսի գործեր չունենանք»:

Կառավարությունը երեկվա նիստում հաստատեց նաեւ «Արամի փողոցի 72-80 հասցեներում ձախողված կառուցապատման ծրագրի տուժած անձանց գույքային կորուստների վերականգնման միջոցառումների եւ ծրագրի մասին» որոշման նախագիծը, որն առաջարկում է Երեւանի քաղաքապետին` համայնքի սեփականություն Արամի փողոց 72, 74 եւ 76 հասցեներում գտնվող բազմաֆունկցիոնալ ավարտված շենքը ներդնել Ծիծեռնակաբերդի 1/2 հասցեում գտնվող բազմաֆունկցիոնալ անավարտ շենքի սեփականատեր «Դի ընդ էյջ գրուպ» ընկերության կանոնադրական կապիտալում:

Հ. Հ.

# Ռուսաստանը եւ Թուրքիան մրցակցության եւ համագործակցության միջեւ

Հայաստանի եւ ամբողջությամբ վերցրած Հարավային Կովկասի համար վերջին քսան տարիներին առանձնակի հետաքրքրություն են ներկայացրել տարածաշրջանի երկու խոշոր հարեւանների՝ Թուրքիայի եւ Ռուսաստանի հարաբերությունները: Երկու պետությունների միջեւ դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել դեռեւս 1701 թվականին: Սակայն պատմաբանները կվկայեն, որ ռուս-թուրքական հակամարտությունը 18-րդ դ.-ից մինչեւ «սառը պատերազմի» ավարտը եղել է բարդ եւ գերզգայուն հարաբերությունների դիպուկ օրինակ: Խորհրդային Միության փլուզումից հետո Ռուսաստանի Դաշնությունն իրեն հայտարարեց նախկին ԽՍՀՄ-ի իրավահաջորդ եւ որակական նոր փորձ կատարեց իր հարեւանների, մասնավորապես Թուրքիայի հետ փոխհարաբերությունները պրագմատիկ հիմքերի վրա կառուցելու համար: Այդ նոր հարաբերությունների դինամիկ զարգացման արդյունքում ռուս-թուրքական առեւտրատնտեսական կապերի ծավալը վերջերս սկսեց կազմել 55 մլրդ ԱՄՆ դոլար: Ոգեւորված այս աննախադեպ զարգացումից՝ ռուս-թուրքական տնտեսական համագործակցության խորհուրդը վերջերս հայտարարեց, որ հնարավոր է համարում մոտակա տարիների ընթացքում առեւտրատնտեսական կապերի ծավալը հասցնել մինչեւ 100 մլրդ ԱՄՆ դոլարի: Ռուսաստանը Թուրքիայի՝ աշխարհում երկրորդ տնտեսական գործընկերն է, իսկ հարաբերությունների զարգացման այսպիսի դինամիկայի պայմաններում Թուրքիան կարող է դառնալ Ռուսաստանի երկրորդ առեւտրական գործընկերը Չինաստանից հետո: Փորձենք վերլուծել Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունները, ներառյալ այն հակասությունները, որոնք կարող են ժամանակի ընթացքում լուրջ հակամարտության պատճառ դառնալ:

## Աշխարհաքաղաքական սկզբունքային հակառակորդներ

Ռուսաստանը եւ Թուրքիան իրենց պատմության ընթացքում տասներեք անգամ պատերազմել են միմյանց դեմ: 19-րդ դ. եւ 20-րդ դ. սկզբին ռուսական զորքերը չորս անգամ մտել են Արեւմտյան Հայաստանի տարածք, սակայն չորս անգամ էլ վերջիվերջո ստիպված են եղել հեռանալ նվաճված տարածքից՝ իրենց հետ գաղթեցնելով տասնյակհազարավոր հայերի, նաեւ ասորիների ու եզդիների, որոնք վախենում էին այդ պատերազմներին հաջորդած ժամանակաշրջանում թուրքերի վրիժառությունից: Հինգերորդ անգամ նման պատերազմ կարող էր տեղի ունենալ 1944-45 թթ., երբ խորհրդային զորքերը կհատեին խորհրդա-թուրքական սահմանը: Այդ բանը, սական, ամերիկացիների եւ անգլիացիների ճնշման պայմաններում տեղի չունեցավ, եւ խորհրդային Անդրկովկասը Թուրքիայի Հանրապետությունից բաժանող սահմանը, ընդհուպ ԽՍՀՄ փլուզումը, աշխարհում ամենախիստ պահպանվող պետական սահմաններից մեկը մնաց: Այդ սահմանը սոցիալիզմի աշխարհը բաժանում էր կապիտալիզմի աշխարհից, եւ Թուրքիան ոչ միայն աշխարհաքաղաքական հակառակորդ էր, այլեւ գաղափարական թշնամի:

Խորհրդային Միության փլուզումից հետո Ուկրաինան, Վրաստանը եւ Ադրբեջանը դարձել են Թուրքիայի սերտ տնտեսական գործընկերներ: Ավելորդ չէ հիշեցնելը, որ թուրքերն ու ադրբեջանցիները իրենց համարում են երկու պետություններում ապրող մեկ ազգ: Եվ չնայած «սառը պատերազմին» հաջորդած հարաբերական ջերմացման քսանամյակում Ռուսաստանը եւ Թուրքիան այլեւս գաղափարական հակառակորդներ չեն, սակայն ՀԱՊԿ-ի եւ ՆԱՏՕ-ի ազդեցության ոլորտները առաջվա պես հատվում են նաեւ մեզ մոտ՝ Հարավային Կովկասում:

90-ական թվականների սկզբից արեւմտյան անվտանգային գլոբալ ծրագրերում Թուրքիան դիտարկում էին որպես ընդօրինակման արժանի օրինակ հետխորհրդային հարավկովկասյան եւ կենտրոնասիական պետությունների համար: Այս երկրների նկատմամբ հովանավորի դերը ստանձնելու համար Թուրքիայի ռեսուրսները չբավարարեցին: Սակայն Ադրբեջանի եւ Կենտրոնական Ասիայի երկրների շրջանում հասկանալի եւ բնական ձգտում առաջացավ զարգացնելու բազմատեսակ եւ բազմամակարդակ հարաբերություններ Թուրքիայի հետ լեզվամշակութային եւ կրոնական ընդհանրությունների հիման վրա: Միամտություն է կարծելը, որ Թուրքիան կարող է թուրքացնել Կենտրոնական Ասիայի ժողովուրդներին: Նման բան չի կարող պատահել թեկուզ այն պարզ պատճառով, որ Կենտրոնական Ասիայի թյուրքական ազգերն ունեն սեփական մշակույթի եւ լեզվի շատ խոր հիմքեր, եւ դա հիմք է տալիս հաստատելու, որ տեսանելի հեռանկարում նրանք պահպանելու են իրենց ինքնությունը: Սակայն ընդհանրություններ եւ նմանություններ փնտրող թյուրքական ազգերը միմյանց հետ հարաբերությունները խորացնելու բնական ցանկություն ունեն: Օրինակ՝ ղազախ քաղաքական գործիչները դիպուկ բնորոշում են, որ թյուրքական աշխարհի հետ համագործակցում են ազգակցության հիմքերի վրա, իսկ ՀԱՊԿ-ի երկրների հետ՝ իբրեւ ռազմաքաղաքական դաշնակիցներ:

Դժվարությունների հանդիպելով Եվրոպական միության լիարժեք անդամ դառնալու իր ձգտման հարցում, Թուրքիան փորձում է ստանձնել Մերձավոր եւ Միջին Արեւելքի առաջատար պետության դերը: Դեռ տասը տարի առաջ արեւմտյան դիտորդները հանգել էին եզրակացության, որ միաբեւեռ աշխարհից բազմակենտրոն աշխարհին անցնելու պարագայում Թուրքիան հավակնելու է Մեծ Մերձավոր Արեւելքում ինքնուրույն բեւեռի դերին: Առայժմ դրան խանգարում են Սիրիայի, Իսրայելի, Իրանի հետ լարված հարաբերությունները: Թուրքիայում համոզված են, որ մինչեւ 2050 թ. իրենց երկիրը կմտնի աշխարհի տասը ամենահզոր տնտեսությունների շարք, իսկ բնակչությունը կլինի մոտավորապես այնքան, որքան Ռուսաստանում:

Հետխորհրդային քսանամյակում տարբեր պատճառներով ստացվեց այնպես, որ թուրքական նավատորմը Սեւ ծովում ավելի ուժեղ էր, քան ռուսականը: Նման բանը սպառնալիք համարելով՝ վերջին շրջանում Ռուսաստանը սեւծովյա ափամերձ տարածքներում տեղակայել է այնպիսի զինատեսակներ, որոնք չեզոքացնում են Թուրքիայի ռազմածովային նավատորմից սպասվող վտանգները: Հայտնի է, որ Թուրքիայում հովանավորություն են փնտրել չեչեն անջատողականները, ծայրահեղ մահմեդական խմբավորումների անդամները եւ Ղրիմի թաթարական գործիչներ, ովքեր կուզենային թերակղզին վերադարձնել թուրքական ազդեցության տակ: Այս ամենը ծնում է լարվածություն եւ ստիպում է Ռուսաստանին եւ Թուրքիային փնտրել միմյանց անվտանգության համար աճող սպառնալիքները չեզոքացնելու միջոցներ:

Թուրքիան «Մեծ Ալբանիայի» գաղափարի հովանավորն է, այսինքն՝ հանդես է գալիս Կոսովոն Ալբանիային միացնելու ծրագրի օգտին: Ռուսաստանը այդ բանը թույլ տալ չի կարող, թեկուզ սերբերի նկատմամբ ունեցած պատմական առաքելության պատճառով: Այսպիսով, տարբեր պատճառներով, որքան էլ Ռուսաստանն ու Թուրքիան սերտացնեն հարաբերությունները տնտեսական դաշտում, աշխարհաքաղաքական առումով մնալու են սկզբունքային հակառակորդներ:

## Թուրքական եվրասիականություն եւ ռուսական եվրասիականություն

Խորհրդային Միության փլուզումից հետո Ռուսաստանը եւ նրա մերձավոր դաշնակիցները փնտրել եւ փնտրում են համախմբումն ու համագործակցությունը ամրապնդելու համար ուժեղ եւ հետխորհրդային հասարակությունների համար ընդունելի միջոցներ: Ընդամենը 10-15 տարի առաջ եվրասիականություն ասելով Թուրքիան հասկանում էր թյուրքական եւ սլավոնական ժողովուրդների համախմբող հսկա մի տարածք, որը ինքնուրույն աշխարհաքաղաքական տարածքմիավոր կարող է լինել: Այդ տարածքում են առաջին հերթին Ադրբեջանը եւ Կենտրոնական Ասիայի պետությունները: Այդ տարածքում են նաեւ Ռուսաստանի Դաշնության կազմում ապրող թյուրքական լեզվաընտանիքի ժողովուրդները: 10-15 տարի առաջ թվում էր, թե եվրասիականության այս ընկալումը կարող է բնական դաշնակիցներ դարձնել Ռուսաստանին եւ Թուրքիային: Սակայն նման բան առայժմ տեղի չի ունեցել, եւ, վերլուծաբանների կարծիքով, երբեք տեղի չի էլ ունենա: Ռուս-թուրքական գործընկերային հարաբերությունները անընդհատ զարգանալու միտում ունեն, սակայն անընդհատ զարգացման միտում ունեն նաեւ թուրք-ամերիկյան ռազմավարական հարաբերությունները: Թուրքերի մասին ամերիկացիներն ասում են, որ նրանք բարդ եւ կոշտ գործընկեր են եւ միշտ չէ, որ ենթարկվում են ավագ գործընկերների թելադրանքին: Դրա վկայությունը թեկուզ եւ այն էր, որ հայ-թուրքական երկխոսության մեջ, առաջնորդվելով թուրք-ադրբեջանական եղբայրության կողմնակիցների հորդորներին, Թուրքիան սառեցրեց, հակառակ ԱՄՆ-ի հորդորներին, հայ-թուրքական արձանագրությունների վավերացումը:

Բոլոր տվյալները կան հաստատելու, որ Ռուսաստանը Թուրքիային էլ է առաջարկել քննարկել Եվրասիական միությանը անդամակցելու հնարավորության հարցը: Սակայն մի քանի պատճառներով Թուրքիան չի ցանկանա դառնալ Ռուսաստանի կրտսեր գործընկեր: Հասկանալի է, որ ապագա Եվրասիական միության առանցքը Ռուսաստանն է, որը վերահաստատել է ժամանակակից բազմաբեւեռ աշխարհում ինքնուրույն բեւեռ լինելու իր իրավունքը: Թույլ ենք տալիս մեզ կանխատեսել, որ Եվրասիական միության ձեւավորման եւ զարգացման հետեւանքներից մեկն էլ լինելու է այն, որ Թուրքիայում կվերաիմաստավորեն եւ կվերանայեն եվրասիականության մասին քաղաքական պատկերացումները, այդ գործընթացի զարգացումը թողնելով ավելի հեռավոր ժամանակներին: Օրինակ, այն ժամանակներին, երբ թյուրքական ժողովուրդների բնական աճը կգերազանցի սլավոնական ժողովուրդների բնական աճին:

## Համագործակցություն եւ ընդհանուր շահեր

Հետխորհրդային Ռուսաստանի տնտեսական կյանքում տեղի ունեցած ամենամեծ իրադարձություններից մեկը թուրքական կապիտալի եւ որակյալ աշխատուժի մուտքն էր: Ռուսաստանը եւ Թուրքիան ինտենսիվ համագործակցում են ոչ միայն գազի եւ նավթի մատակարարման ասպարեզում, չնայած բնական գազի ներկրումը կազմում է երկկողմ առեւտրաշրջանառության առյուծի բաժինը: Թուրքական ընկերությունները Ռուսաստանում կայուն դիրքեր են գրավել առեւտրական կենտրոնների շինարարության, հյուրանոցների շինարարության, թեթեւ արդյունաբերության եւ սարքաշինության ոլորտներում: 2010 թ. տվյալներով՝ Թուրքիայից Ռուսաստան արտահանվող ապրանքների 44% կազմում էր ավարտուն արտադրանքը, ինչը նշանակում է, որ թուրքական ապրանքները Ռուսաստանում համարում են բարձրորակ: Ռուսները համարվում են ամենացանկալի զբոսաշրջիկները Թուրքիայի լողափերում, իսկ ռուսաց լեզուն զբոսաշրջիկների հետ աշխատելու շրջանում հաջողության հասնելու գրավականներից է: Թուրքիան եւ Ռուսաստանը Սեւծովյան տնտեսական համագործակցության երկու ամենախոշոր անդամներն են, եւ սեւծովյան տարածաշրջանի զարգացումը ընդհանուր առմամբ հնարավոր է նրանց համագործակցության պայմաններում:

Ռուսաստանը ավելացրել է Թուրքիա առաքվող բնական գազի ծավալները 3 մլրդ խորանարդ մետրով, եւ բոլոր հիմքերը կան հաստատելու, որ Թուրքիայով է անցնելու ռուսական գազի արտահանման ամենագլխավոր երթուղիներից մեկը: Այդ գազին են սպասում ոչ միայն Թուրքիայում, այլեւ Բուլղարիայում, բալկանյան երկրներում, Հունաստանում եւ Իտալիայում: Թուրքերը հմտորեն օգտագործեցին միաժամանակ թե՛ ռուսների, թե՛ արեւմտյան երկրների հետ համագործակցելու հնարավորությունները, դառնալով նաեւ ադրբեջանական նավթի եւ գազի համար տարանցիկ տարածք՚:

Այսօր Թուրքիան աշխարհում տասնվեցերորդ ամենազարգացած տնտեսությունն է: Թուրքիայում հատուկ կարեւորություն են տալիս G20 ամենազարգացած տնտեսություն ունեցող երկրների «ակումբի» անդամ լինելու հանգամանքին: Թուրքիան որոշել է դառնալ ատոմային էներգետիկայի երկիր եւ ստացել է Ռուսաստանի համաձայնությունը 20 մլրդ դոլար արժողությամբ «Ակքույու» ատոմակայանի շինարարության համար: Ռուսները համաձայնվել են մի ատոմակայան էլ կառուցել Սինոպից ոչ հեռու եւ, այս նախագծերի հաջողության դեպքում Թուրքիան կդառնա ատոմային էներգետիկայի առաջատարը տարածաշրջանում:

«**Ազգ**»-ի էջերում մենք կանխատեսել ենք, որ մեռյալ կետից հայ-թուրքական երկխոսությունը առաջ շարժելու միակ հնարավորությունը եվրասիական ինտեգրման գործընթացին Հայաստանի գործուն մասնակցության դեպքում է նշմարվում: Մյուս բոլոր դեպքերում, Լեռնային Ղարաբաղի հակամարտության առկայության պայմաններում, թուրքերը գտնվելու են ադրբեջանական հզոր լոբբիինգի ազդեցության տակ, եւ Հայաստանի հետ խոսելու են նախապայմանների եւ ճնշման լեզվով: Այստեղ եւս մեկ անգամ ուզում եմ հիշեցնել, որ տարբեր առիթներով Հայաստան ժամանող յուրաքանչյուր թուրքական պատվիրակություն զարմանքով արձանագրում է, որ քսանամյա ճնշման պայմաններում Հայաստանի տնտեսությունը այնուամենայնիվ առաջընթաց է ապրում, իսկ հայերս՝ շարունակում ենք պայքարել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ դատապարտման արդար դատի համար:

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**
**Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու**

# PKK-ի հետ Էրդողանի կառավարության հաշտեցումը հեռագնա նպատակներ է հետապնդում

## *Դրանց իրականացման դեպքում Անկարան կստանձնի տարածաշրջանի քրդերին միավորելու «առաքելությունը»*

Օրերս Քուրդիստանի աշխատավորական կուսակցության՝ PKK-ի բանտարկյալ առաջնորդ Աբդուլլա Օջալանը ծննդյան օրվա կապակցությամբ ստացել է բազում շնորհավորանքներ: Դրանք Օջալանին առիթ են տվել, որ արձագանքի պատասխան նամակով, որը քուրդ ժողովրդի համար պատգամի բնույթ է կրում:

Նամակի տեքստը երեկ կայքէջում հրապարակել էր «Դունիա բուլթենի» լրատվական գործակալությունը: Նամակում Օջալանը ողջունում է քուրդ ժողովրդին եւ բոլոր նրանց, ովքեր ծննդյան օրվա առթիվ շնորհավորել են իրեն, ապա եւ շարունակում է. «Ուզում եմ ձեզ ավետել, որ արժանապատիվ խաղաղության հնարավորությունները վերին աստիճանի ընդարձակվել են: Դա կարեւորագույն բարիքն է, որը մենք մատուցում ենք մեր եղբայրներին: Այս օրը կարեւոր է ոչ այնքան իմ ծննդյան, որքան մեր ժողովրդի վերածննդի համար: 65 տարեկան եմ դառնում: Իմ պարտականությունները կատարել եմ: Գործելու հերթը ժողովրդինն է: Համոզված եմ, որ դուք ձեր պարտականությունը կկատարեք ըստ արժանավույն: Հաշտեցման գործընթացին նպաստելու եւ գործընթացը զարգացնելու կոչ եմ անում բոլոր նրանց, ովքեր արժանապատվության տեր են: Այլեւս կյանքը բոլորովին այլ հունով է ընթանալու: Հուսամ, որ այս գործընթացը վերջ կտա արյունահեղությանը»:

Օջալանի այս նամակը նրա նովրուզյան՝ մարտի 21-ի ուղերձի շարունակությունն է: Ուղերձում նա զենքը վայր դնելու եւ Թուրքիայի սահմանները լքելու կոչ էր արել PKK-ի մարտիկներին, իսկ նամակում հաշտեցման գործընթացին հավասարիմ մնալու պատգամ է հղում քուրդ ժողովրդին: Այսինքն, որքան էլ վարչապետ Էրդողանի կառավարությանը համախունչ տեսակետներ արտահայտելու մեջ մեղադրվի, Օջալանը շահագրգիռ է այդ գործընթացով:

Նույնը պետք է ասել Հյուսիսային Իրաքի դե ֆակտո անկախ «Քուրդիստան» շրջանի ղեկավարության մասին: Քուրդ ղեկավարներից մեկը «Դունիա բուլթենի» վկայությամբ, ասել է, որ իրենք առնվազն Թուրքիայի չափ շահագրգիռ են, որ PKK-ն վայր դնի զենքը: Անանուն այդ ղեկավարը ավելացրել է. «Մենք էլ քարի տակ ենք դնելու մեր ձեռքը: Մշակել ենք սարերում ապաստանած PKK-ի մարտիկների համար մի շարք նախագծեր: Աշխատանքով ապահովելու ենք Թուրքիայից ժամանող կամ Ղանդիլ սարում ապաստանող PKK-ականներին: Քննարկման փուլում է նրանց կացության հարցը: Սակայն պետք է ասեմ, որ պատրաստ է լինելու կարիքավոր PKK-ականների աշխատանքն ու բնակարանը»:

Այլ կերպ, «Քուրդիստան» շրջանի ղեկավարությունը նույնպես աջակցում է PKK-թուրքական իշխանություն հաշտեցման գործընթացին: Ավելին, PKK-ի մարտիկների զինաթափման եւ Թուրքիայից դուրսբերման նախադրյալներ է ստեղծում, որ նպաստի գործընթացի զարգացմանը: Կնշանակի Հյուսիսային Իրաքի «Քուրդիստան» շրջանի ղեկավարությունը տեսակետներում նույնպես համախունչ է վարչապետ Էրդողանի կառավարության հետ:

Մինչդեռ Իրաքի հյուսիսում ամերիկյան նախաձեռնությամբ ստեղծված այդ շրջանը դե ֆակտո անկախության է հասել ԱՄՆ-ի եւ Եվրամիության աջակցությամբ, սկսած 90-ականներից Թուրքիայի դեմ ռազմական գործողություններում PKK-ին ապաստանի դեր է կատարել եւ շրջանում չափազանց մեծ է Իսրայելի ազդեցությունը, որն այնտեղ ոչ միայն մարզել է կանոնավոր զորքի կարգավիճակ ստացած փեշմարգաներին, այլեւ երկու ռազմաբազա է տեղակայել:

Այս ամենի լույսի տակ PKK-ի հետ հաշտեցման գործընթաց սկսելու վարչապետ Էրդողանի ձեռնարկումները եւ Օջալանի այդ գործընթացին նպաստելու համար PKK-ականներին արած զենքը վայր դնելու եւ Թուրքիայի սահմաններից հեռանալու կոչը համադրվում են զենքը վայր դրած եւ Թուրքիայից հեռացած PKK-ականներին աշխատանքով եւ բնակարանով ապահովելու «Քուրդիստան» շրջանի ղեկավարության պատրաստակամության հետ: Համադրման պայմաններում ակնհայտ է դառնում, որ PKK-թուրքական իշխանություն հաշտեցման բուն նախաձեռնողը ԱՄՆ-ի գլխավորությամբ Արեւմուտքն է, որին Իսրայելն է աջակցում, իսկ քրդական հարցը կարգավորելու պատրաստությունը բացի Թուրքիայից, ներառում է նաեւ Իրանին, Իրաքին ու Սիրիային: Այսպիսով, քրդական հարցը ինքնաբերաբար դառնում է «Մեծ Մերձավոր Արեւելք» նախագծի բաղադրամասը:

Այդ առումով հասկանալի է «Ֆայնենշըլ թայմսի» երեկվա համարում Դեյվիդ Գարդների ստորագրությամբ հրապարակված հոդվածը: Ահա թե ինչ է գրում. «Էրդողանը, 10 տարի շարունակ վարելով Թուրքիայի վարչապետի պաշտոնը, ժամանակ առ ժամանակ անկանխատեսելի քայլեր էր կատարել, ենթարկվելով խստագույն քննադատության: Սակայն անցյալ շաբաթ Էրդողանը ամենայն վճռականությամբ բռնեց քրդերի հետ Թուրքիայի հաշտեցման ուղին եւ արժանացավ բազում գովեստների դափնեպսակի: Եթե գործընթացը նպատակին ծառայի, ապա մեծ ձեռքբերումներ կմատուցի Թուրքիային: Դա միաժամանակ հոյակապ հետեւանքներ կունենա նաեւ Մերձավոր Արեւելքի համար: Ամենեւին չափազանցություն չի լինի ասել, որ Էրդողանը պատրաստվում է տարածաշրջանում ծայրից ծայր բացել քրդական շրջանների սահմանները»:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Samoa Air-ը տոմսի գինը կսահմանի ըստ ուղեւորի քաշի



Խաղաղօվկիանոսյան Սամոա պետության Samoa Air ավիաընկերությունը մտադիր է ուղեւորների համար սահմանել «արդար» սակագներ: Այսուհետեւ տոմսի գինը կախված կլինի ուղեւորի քաշից եւ թռիչքի հեռավորությունից:

ABC հեռուստաալիքը նշում է, որ Samoa Air-ը ներքին ուղեւորափոխադրումներ է իրականացնում կղզիների միջեւ: Ի դեպ, Սամոայի բնակիչների 5 տոկոսից ավելին տառապում է գիրությունից: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով, դա ճարպակալման ամենաբարձր տոկոսն է աշխարհի երկրների մեջ:

Ավիաընկերության ղեկավար Քրիս Լանգտոնը ABC հեռուստաընկերությանը տված հարցազրույցում հայտնել է, որ տոմսերի գները քաշի յուրաքանչյուր կիլոգրամի համար կկազմեն 1-ից մինչեւ 4,16 դոլար՝ կախված թռիչքի հեռավորությունից: Ըստ որում, որեւէ հավելավճար չի գանձվելու: Լանգտոնի խոսքերով, նորույթը կգնահատեն երեխաներով ընտանիքները, որոնք մինչեւ վերջերս ստիպված էին լրացուցիչ վճարել երեխայի տեղի համար, իսկ այսուհետեւ երեխայի քաշը պարզապես կավելացնեն ընտանիքի ընդհանուր քաշին:

Համացանցի միջոցով տոմս ձեռք բերող հաճախորդները ստիպված կլինեն նշել իրենց քաշը, ըստ որի կհաշվարկվի տոմսի արժեքը: Ուղեւորներին չի հաջողվի խարդախություն անել, քանի որ թռիչքից առաջ նրանց քաշերը կստուգվեն:

Պ. Ք.

ՄԵԾ ԱՂՄՈՒԿ

# Ամերիկյան ինստիտուտը Ադրբեջանում հեղափոխությո՞ւն է նախապատրաստում

**Որոշ ժամանակ առաջ ադրբեջանական haqqin.az կայքում հանրաճանաչ լրագրող Էյնուլահ Ֆաթուլաեւը, որը հայտնի է մասնավորաբար Խոջալուի մասին ունեցած «հակաադրբեջանական» տեղեկություններով ու դրանց բարձրաձայնման հետեւանքով՝ մի քանի տարի բանտում անցկացրած լինելով, աղմկահարույց հոդված էր հեղինակել, որ Ադրբեջանում գործող ԱՄՆ Ազգային ժողովրդավարական ինստիտուտը (NDI) Ադրբեջանում հեղափոխություն անելու համար պատրաստ է տրամադրել 2 մլն դոլար»: Հոդվածում Ֆաթուլաեւը մանրամասնում էր, որ ինստիտուտի Բաքվի ներկայացուցչության ղեկավար Ալեքս Գրիգորեւը իր անձնական հաշվեհամարից հանել է հենց 2 մլն դոլար, ինչը, Ֆաթուլաեւի տրամաբանությամբ, հենց պետք է ուղղվեր Ադրբեջանում հեղափոխություն իրականացնելուն: Ֆաթուլաեւի ենթադրությունը հիմնավորվում է նաեւ այն հանգամանքով, որ հիշյալ Ալեքս Գրիգորեւը մինչ Ադրբեջանում աշխատելը աշխատել է նաեւ Վրաստանում նախքան Սաակաշվիլու իշխանության գալը:**

**Այս ամենը, բնականաբար, մեծ աղմուկ հանեց հարեւան երկրում, գործին միջամտեց անգամ Իլհամ Ալիեւի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհտիեւը: Վերջինս իր հարցազրույցներից մեկում ասել էր, թե «Ադրբեջանում որոշ միջազգային հասարակական կազմակերպություններ մութ գործերով են զբաղված, կողմնակալ են, ոչ անաչառ, եւ փորձում են միջամտել երկրի ներքին գործերին»: Մեհտիեւը հատուկ այս կազմակերպությունների ցանկում տվել էր նաեւ NDI-ի անունը՝ ընդգծելով. «Մենք ստուգում ենք մամուլում առկա տեղեկությունները, եւ եթե ամեն բան համապատասխանի իրականությանը, ապա մենք կարգելենք այդ կազմակերպության գործունեության շարունակությունը Ադրբեջանում»:**

**NDI-ի պատասխանը իրեն երկար սպասեցնել չտվեց: Ըստ ադրբեջանական «Թուրան» գործակալության՝ ինստիտուտը տնօրեն Քենեթ Վոլաքի ստորագրությամբ, հաղորդագրություն է տարածել, որտեղ նշված է, որ Ադրբեջանում իսկական արշավ է սկսվել ինստիտուտի ու նրա աշխատակիցների նկատմամբ: Հաղորդագրությունում ընդգված է, որ «մամուլում հանդիպող բոլոր տեղեկությունները սուտ են եւ չեն համապատասխանում իրականությանը»: Վոլաքը կոնկրետ դիմելով պաշտոնական Բաքվին՝ շեշտել է. «Անընդհատ կրկնելով՝ սուտը ճշմարտություն չի դառնում...»:**

**Թերեւս այս մասին պաշտոնական Բաքվին կարելի է հաճախ հիշեցնել, եւ ոչ միայն NDI-ից:**

**Հիշեցնենք միայն, որ ԱՄՆ Ազգային ժողովրդավարական ինստիտուտը ստեղծվել է ԱՄՆ կառավարության կողմից՝ «նպատակ ունենալով նպաստել զարգացող երկրներում ժողովրդավարության զարգացմանը»: Եվ Բաքվում հենց այս նպատակն ունեցող կազմակերպության գործունեության կասեցումն է, փաստորեն, սպառնում՝ նախագահական ընտրություններից մի քանի ամիս առաջ, որտեղ, ինչպես գիտենք, Իլհամ Ալիեւը երրորդ անգամ անընդմեջ իհարկե կվերընտրվի Ադրբեջանի նախագահի պաշտոնում:**

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Ռամզան Կադիրով. «Երկնաքերի հրդեհը բարձրյալի կամքով էր»

## *Հարեւան շենքում Դեպարդյոյի բնակարանն է*




**Չեչնիայի ղեկավար Ռամզան Կադիրովը իր անհատական կայքէջում Գրոզնիի բնակիչներին լավատեսության հույս է ներշնչել քաղաքի «Օլիմպ» երկնաքերում չորեքշաբթի երեկոյան տեղի ունեցած սաստիկ հրդեհի կապակցությամբ: Նրա խոսքերով, արտակարգ պատահարից տուժել է միայն շենքի երեսպատվածքը: «Բարեկամներ, հյուրանոցը գործում է սովորական ռեժիմով: Տուժել է միայն շենքի երեսպատվածքը, այլ ոչ թե բուն կառույցը: Պահպանությանն ուղղված բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկվել են: Անհրաժեշտ սարքավորումները եւ ավիացիան նախապես պատվիրված էին, բայց հրդեհը բռնկվեց բարձրյալի կամքով, իսկ Նրա կամքի դեմ մենք անզոր ենք», գրել է Կադիրովը:**

**Նա ավելացրել է, որ բարձրահարկ համալիրի տարածքի մաքրման աշխատանքներն արդեն սկսված են:**

**ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ չորեքշաբթի երեկոյան Գրոզնի-Սիթիում հրդեհ էր բռնկվել երկնաքերում՝ 40-հարկանի հյուրանոցային շենքում: Այրվում էր 2-րդից մինչեւ 40-րդ հարկերի արտաքին պատը: Նախնական տվյալներով, 145 մետր բարձրությամբ «Օլիմպ» երկնաքերում հրդեհը ծագել էր էլեկտրահաղորդակի կարճ միացումից: Հրդեհը հաջողվեց մարել միայն ապրիլի 4-ի վաղ առավոտյան: Զոհեր եւ տուժածներ չկան: Բոլոր մարդկանց հաջողվել էր արագորեն դուրս գալ շենքից:**

**Գրոզնի-Սիթին բարձրահարկ շենքերի համալիր է Չեչնիայի մայրաքաղաքի կենտրոնում, Սունժա գետի ափին: Համալիրի մասը կազմող «Օլիմպը» Ռուսաստանի ամենաբարձր բնակելի շենքն է Մոսկվայից դուրս: Չորսուկես հեկտար տարածքով համալիրում կան 40, 30 եւ 18-հարկանի յոթ բարձրահարկ շենքեր: Համալիրում կա ընդհանուր առմամբ 1000 բնակարան: Դրանցից մեկը պատկանում է ֆրանսիացի հայտնի դերասան Ժերար Դեպարդյոյին եւ գտնվում է «Օլիմպի» հարեւան բարձրահարկ շենքում: Բնակարանը Չեչնիայի ղեկավար Ռամզան Կադիրովի նվերն է:**

Պ. Ք.

# «Վերածնունդ» միջազգային երաժշտական 5-րդ մրցույթ-փառատոնը` ապրիլի 10-ից

Հայաստանի եւ աշխարհի 30 երկրների հինգից հիսունմեկ տարեկան 2415 կատարողներ են մասնակցության հայտ ներկայացրել երաժիշտ-կատարողների Գյումրու հինգերորդ միջազգային մրցույթ-փառատոնին, որի հանդիսավոր բացումը տեղի կունենա ապրիլի 10-ին, Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճում: Այս տարվա փառատոնը, որի կազմակերպիչներն են «Փյունիկ» համահայկական հիմնադրամը, ՀՀ մշակույթի նախարարությունը եւ Երեւանի պետական երաժշտանոցի Գյումրու մասնաճյուղը, նվիրված է Արամ Խաչատրյանի ծննդյան 110 եւ Սպիտակի երկրաշարժի 25-ամյակներին, անցկացվելու է «Գյումրին ԱՊՀ երկրների մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում:

Կատարողական 13 անվանակարգերում, 5 տարիքային խմբերով երաժշտական մրցույթներն անցկացվելու են ամսի 11-17-ը, հիմնականում` կրթական-մշակութային տարբեր հաստատությունների դահլիճներում, իսկ ըստ անվանակարգերի հաղթողների պարգեւատրումն ու գալա համերգը տեղի կունենա ապրիլի 18-ին: Մրցութային հանձնախմբի կազմում ընդգրկված են համահայ կատարողներ, նշանավոր արվեստագետներ Հայաստանից եւ արտերկրից:

Երաժիշտ-կատարողների Գյումրու «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնն անցկացվում է ամեն տարի, նպաստելով օժտված հասկապես պատանի եւ երիտասարդ երաժիշտների ճանաչմանն ու մասնագիտական աճին: Ի դեպ, եթե նախորդ տարիներին մրցույթը կազմակերպվում էր հիմնականում երիտասարդ երաժիշտների համար եւ կոչվում էր երիտասարդ երաժիշտ-կատարողների մրցույթ-փառատոն, ապա այս անգամ տարիքային սահմանափակումը վերացված է եւ, պատասխանատուների հավաստմամբ, մասնակիցների թվում կլինեն նաեւ կայացած արհեստավարժ կատարողներ:

Փառատոնի շրջանակներում, ինչպես ամեն տարի, կանցկացվի նաեւ «Մշակույթների երկխոսություն» ընդհանուր խորագրով արվեստագիտական միջազգային գիտաժողով, կանցկացվեն մշակութային միջոցառումներ, վարպետության դասեր, համերգներ Գյումրիում ու նաեւ Երեւանում: Մասնակիցներին կներկայացվեն քաղաքն իր անցյալով ու ներկայով, Շիրակի պատմամշակութային հարուստ ժառանգությունը:

Գ. Ս.

# Ինքդ սեր, սերդ` ձայն ու հնչյուն




Եվ այդպես էլ չեմ հասկանում` այդ ինչպե՞ս, ի՞նչ եղանակով է «սեւաչյա» մեր բանաստեղծը կարողացել ժողովրդի հավաքական արգանդը հատել ու երկու թխլիկների միջոցով բարբառել իր իսկ արտինն ու մտքինը... Չգիտեմ, բայց, երեւի թե, բանաստեղծական հանճարի ուժը բավական ազդու է եղել, կամ էլ` Հանճարներն են նրան մեծացրել ու գոտեպնդել... Բայց արգա՞նդը հատեց բանաստեղծը, թե՞ ցույց տվեց` ինչպես իր ազգի հատված արգանդը իր իսկ Հերոսը «կարկատեց ու վերականգնեց»...

Ու նորից հենց նա` սեւաչյա այդ բանաստեղծը, ասում էր` «իր ժողովրդի զավակն իսկական, ժողովրդի պես ինքն էլ որբ մնաց»: Կրկին չեմ հասկանում` նա՞ որբ մնաց, թե՞ մեզ իրենից հետո որբ թողեց, ու այսօր որբը մենք ենք, որ կանք: Ո՛չ, ո՛չ, փառք Տիրոջը, ֆիզիկապես որբ չենք, այ իսկ հոգով ու արվեստով ` դժվարանում եմ ասել...

Ամեն դեպքում, կարծում եմ` որբ ենք, թե չէ ինչո՞ւ այսօր պիտի արվեստը, օրինակ գրականությունը, ողողված լինի` «հում-հում հումանիզմով», նկարչությունը` անլույս գույներով, ճարտարապետությունը` մոդեռնիզմի չհասունացած փորձարկումներով, կինոն` սերիալականությամբ եւ վերջապես երաժշտությունը` հաբիբիոս ու անձայն...

Ու հետո բանաստեղծի Կոմիտասը խելագարվեց: Խելագարվեց արդյո՞ք, լռե՞ց, թե՞ խոկաց... մի՞թե նույնը չէ...Կարծում եմ, որ նա ե՛ւ խոկում էր, ե՛ւ լռում էր, ե՛ւ խելագարվում. հոգին էր այդպես պահանջում, հոգին մարմնի նման որբություն էր տենչում...Այո՛, նա լռեց, բայց խոսեց երգը, խոսեցին նվագն ու մեղեդին: Բայց մի՞թե լոկ մեղեդի. մի տեսակ այնքա՜ն է սեղմում նրա արվեստը: Է՛լ խաղիկներ, է՛լ տաղիկներ, ձոներ, Սոնաներ, հորովել, գութան, ակոս, լորիկ` սիրավոր ու վիրավոր...Մի խոսքով` մի ողջ ազգի սիրո արտացոլանք: Սեր, որ չուներ սկիզբ ու ավարտ, սեր, որ սերեց Տիրոջից ու փառաբանեց, երգեց, ակնածեց նրան, սեր, որ իր ուժգնությամբ ստիպեց պատարագվել Երկնայինին, որ հասավ մինչեւ Դեր-Զոր ու սկսեց սիրել, սիրել լռությունը...

Կոմիտասը ինքն էր ասում` մեկ հասկացված ձայնը, հազար ճառ արժե... Բայց արի ու տես` հիմա միայն ճառեր են, ճառեր` շաղախված մելիզմներով ու մուղամներով:

Ախ, կարոտ ենք ձայնիդ, վարդապետ... Կարոտ ենք աղվորիկ Հարսիդ` խոնարհ ու մունջ կանգնած հնձվորի առջեւ, Սոնայիդ, որ սեր էր սփռում քո հոգով, սարերիդ, որ հով էին անում ու իրենց զեփյուռով ձայնդ տարածում` Խնկի Ծառերին, Վարդիկներին ու Շուշաններին, Նազանի այն յարիդ, որ «կռեցնում» էր ամեն մի պատանու: Եվ վերջապես, կարոտ ու փափագ ենք Դլե Յամանիդ ազնիվ ու հոգի մաքրող հաշընտիր հնչյուններին...

Ուզում եմ` Դլե Յամանները էլ չկրկնվեն, բայց ես գամ նրանց` ազգային միտքը ներկայացնող ու հազար ճառի փոխարինող հնչյունները...

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

# Եռակողմ համաձայնություն




Երեկ Հայաստանի գրողների միության կլոր սրահում «Հովհաննես Իմաստասեր Կաթողիկոս Օձնեցի» բարեգործական հիմնադրամը վավերացրեց եռակողմ համաձայնագիր Հայաստանի Նկարիչների միության եւ Հայաստանի Գրողների միության հետ: Ըստ համաձայնագրի, կողմերը (ի դեմս Վանուշ Շերմազանյանի, Կարեն Աղամյանի եւ Լեւոն Անանյանի) պարտավորվելու են Հայաստանի պատմամշակութային ժառանգության պահպանման, ամրակայման եւ վերականգնման համար իրենց ներդրումն ու աջակցությունը ցուցաբերել:

ьЖИР²рШаЬЖ²






# Կարինէ Պօղոսեանի մենահամերգը

*Ամբողջութեամբ` Ռախմանինով*



Հոգեկան բաւարարութիւն է այլեւս ներկայ գտնուիլ դաշնակահար Կարինէ Պօղոսեանի համերգներուն: Ան ստեղծած է կամը իր եւ հանդիսատեսին միջեւ: Արդէն դարձած է վարպետը անոր: Եւ որքան ներկայ կը գտնուին երաժշտասէրներ իր մենահամերգներուն, կ՚ունենան նոյն հարազատութեան փոխադարձ զգացումները իր եւ իր արուեստին նկատմամբ: Աղուորը այն է, որ իրեն համար չի նուագեր, որպէս գործ կամ սէր որպէս, Կարինէն միշտ նկատի կ՚ունենայ իր ունկնդիրը:

Ահա այս գաղտնիքին ան տիրացաւ անցնող քանի մը տարիներուն եւ ասոր որպէս պատճառ` Կարինէն կը հրաւիրուի ամէնուրեք: Այլեւս հայկական բեմերէն անդին, փնտռուած դաշնակահարուհի` ան գիտէ հմայել ոչ-հայ տարբեր մակարդակներու եւ տարբեր երաժշտական «դպրոց»ներու հետեւող հանդիսականները:

Տարօրինակօրէն ալ, Կարինէն արդէն ունի իր հաւատարիմ ունկնդիրներու խումբ մը, որ իր հետ է ամէն երգահանդէսի: Կը տեսնես դէմքեր, ծանօթ դէմքեր, որոնք քանի մը ամիս առաջ տեսած էիր արդէն: Եւ այս յաջողութեան համար ալ ուրախ ենք, որովհետեւ, լաւ գիտնալով Նիւ Եորքի մշակութային կեանքի մրցակցութիւնը, միայն այն ատեն կրնանք գնահատել արուեստագիտուհիին յամառ աշխատանքը` հասնելու այդ մակարդակին, մասչելի դարձնելով իր արուեստը բոլոր անոնց, քանի որ իր հրամցուցածը ան կը բարձրացնէ այդ որակին:

Վերջինը այդ համերգին եղաւ Մարտ 26ին, Նիւ Եորքի Կոլումբիա համալսարանի Սէյնթ Փոլ մատռան մէջ: 19րդ դարու կոթական ոճով Փրեսփիթերիըն այս եկեղեցին իմքնին քեզ կը դնէ առաջին վայրկեանէն դասական հաճելի մթնոլորտի մը մէջ եւ որմէ չես ուզեր բաժնուիլ:

Յայտագիրը ամբողջութեամբ Սերգէյ Ռախմանինով, նուիրուած էր ռուս մեծահամբաւ երաժիշտին ծննդեան 140ամեակին (1873-1943):

Յայտագիրը երեք բաժինով ներկայացաւ. Six Moments Musicaux, Op. 16, Litacs, Op. 21, No. 5 (երկու յաջորդական ծանր կտորներու միջեւ կարծէք հաճելի միջնարար մը ըլլար, քնքուշ լիլիներու դաշտի մը մէջ կարծես) եւ հեղինակին հռչակաւոր Piano Sonata No. 2 in B-flat Minor, Op. 36 (2nd Version):

Սէյնթ Փոլ մատուռը իր ձայնային սքանչելի ակուստիքով կը մնայ արուեստի մնայուն հարստութիւն մը այս մեծ ոստանին մէջ եւ անշուշտ ժամադրավայր մը Նիւ Եորքի համար: Աւելի քան մէկ ու կէս դար այս մատուռը հրապուրած է որքա՜ն երաժիշտը, նոյնքա՜ն` հանդիսատեսը:

Կարինէն անգամ մը եւս յաջողեցաւ:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ
Նիւ Եորք

# «Ես եմ» բանաստեղծությունների ժողովածու

Երեկ տեղի ունեցավ բանաստեղծուհի Սուսաննա Հովհաննիսյանի «Ես եմ» բանաստեղծությունների ժողովածուի շնորհանդեսը, ինչպես նաեւ իր պատրաստած կոլաժների ցուցահանդեսը:

Բանաստեղծական վեց ժողովածուների հեղինակ Սուսաննա Հովհաննիսյանը նաեւ ինքնատիպ ձեւավորող է: Արակյա տարաներով նրա զարմանահրաշ եւ գունագեղ կոլաժները անմիջապես կլանում են դիտողի ուշադրությունը: Իսկ թեմաները հավերժական են` գին, գինի, սեր, երգ: Ս. Հովհաննիսյանը սկսել է կոլաժներ պատրաստել, երբ տարիներ առաջ իրեն վարդեր են նվիրել, որոնք դուրսը դրել է վարդերին չհամապատասխանող տարայի մեջ: Այդ տարայից բանաստեղծուհին կոլաժ է պատրաստել, որը շարունակական բնույթ է կրել:

«Ես եմ» գրքի ձեւավորման մեջ օգտագործված են այդ աշխատանքներից:

Սուսաննա Հովհաննիսյանն «Ազգի» հետ զրույցում ասաց, որ այս գիրքը վեցերորդն է, որի ձեւավորումն արել է ինքը: «Մեծամասամբ ստեղծագործում եմ դրսում, սակայն նախընտրում եմ գրքերս տպագրել հայրենիքում: Գրքում ներառված բանաստեղծությունները հավերժական թեմաներով են` հայրենիք, բնություն, սեր, որոնք հուզում են բոլոր բանաստեղծներին»: Բանաստեղծուհին նշեց նաեւ, որ ամենադժվարն ընտրում է գրքի վերնագիրը եւ այս գրքի վերնագիրը հանկարծակի` հրաշալկչությունում է ծնվել:

Գրքում ներկայացված է իր աշխարհը, բնությունը, մայրական սերը, ինչպես նաեւ սեր առ հայրենիք:

Անդրադառնալով նոր գրքին, մեր հանգուցյալ բանաստեղծ Հովհաննես Գրիգորյանը բանաստեղծուհու մասին ասել է. «Սուսաննա Հովհաննիսյանին ճանաչում եմ վաղուց, շատ բան գիտեմ նրա մասին նրա բանաստեղծությունների շնորհիվ, որովհետեւ նա ինձ տրամադրել էր կարդալու, դիտողություններ անելու, խմբագրելու նպատակով: Երբ առաջին անգամ կարդացի Սուսաննայի բանաստեղծությունները, վախով մտածեցի, թե ինչքան բան եմ փոխելու, ինչքան շատ տողեր եւ բանաստեղծություններ եմ ջնջելու... Բայց հետագայում, զարմանքով նկատեցի, որ ձեռքս չի գնում վիրահատական միջամտություն կատարել: Մի տող եւ նույնիսկ մի բառ փոխելիս հանկարծ նկատում ես, որ փչել ես ինչ-որ աննշմար մի կառույց, ինչի հետեւանքով ստեղծագործությունը կորցրել է իր հմայքը: Սուսաննա Հովհաննիսյանը միմիայն իր բնածին օժտվածությամբ փորձել է պատկերել հարազատ ժողովրդի պատմությունը, ներկան ու ապագան: Այս դիտանկյունով մոտենալիս, վստահ եմ, ամենապահանջկոտ ընթերցողն անգամ, ներկայացվող գրքում կգտնի սիրտ ու հոգի ջերմացնող տողեր»:

ՍԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱԶԳ **Մարզական**

# Յուրա Մովսիսյանը մարտի լավագույն ֆուտբոլիստների ցանկում 2-րդն է

Ռուսաստանի պրեմիեր լիգան championat.com կայքի հետ համատեղ ամեն ամիս քվեարկության միջոցով որոշում է առաջնության լավագույն ֆուտբոլիստին: Մարտ ամսվա արդյունքներով ՀՀ հավաքականի եւ Մոսկվայի «Սպարտակի» հարձակվող Յուրա Մովսիսյանը ճանաչվել է 2-րդը: Նա վաստակել է 11 միավոր՝ 7-ով զիջելով լավագույնի տիտղոսին արժանացած Մոսկվայի ԲԿՄԱ-ի բրազիլացի հարձակվող Վագներ Լավին: Լավագույն եռյակը եզրափակել է «Կրասնոդարի» հարձակվող Վանդերսոնը, որը վաստակել է 10 միավոր: Ի դեպ, վերջինս «Կրասնոդարում» փոխարինել է Մովսիսյանին եւ նրա հեռանալուց հետո դարձել է թիմի առաջատարը՝ աչքի ընկնելով նաեւ արդյունավետությամբ:



Ընդհանուր հաշվարկով Յուրա Մովսիսյանը ՌԴ լավագույն ֆուտբոլիստի կոչման համար պայքարում 37 միավորով ընթանում է 2-րդ տեղում: Առջեւում Մոսկվայի դինամոյական Ալեքսանդր Կոկորինն է՝ 45 միավոր: Կրասնոդարի «Կուբանում» հանդես եկող Արաս Օզբիլիզը 13 միավորով 13-րդ տեղում է:

«Կրասնոդարի» գլխավոր մարզիչ Սլավոլյուբ Մուսլինն իր կարծիքն է հայտնել «Սպարտակում» Յուրա Մովսիսյանի ելույթների մասին. «Դիտել եմ նրա մասնակցությամբ բոլոր 3 հանդիպումները: Առաջին խաղում Յուրան իրոք իրեն գերազանց դրսեւորեց, սակայն երեւում է, որ նա դեռ պետք է հարմարվի նոր թիմի խաղաոճին: Որոշ ֆուտբոլիստների մոտ լինում են ճգնաժամային իրավիճակներ, երբ նրանք չեն կարողանում գոլ խփել: Չեմ կարծում, թե Յուրայի մոտ ներկայումս այդպիսի ժամանակահատված է: «Թերեքի» հետ խաղում հեթ-տրիկի հեղինակ դառնալուց հետո նա հաջորդ 2 հանդիպումներում չկարողացավ գրավել մրցակցի դարպասը: Մովսիսյանին ժամանակ է անհրաժեշտ լավ մարզավիճակ ձեռք բերելու համար, քանի որ նա բավականին երկար ժամանակ վնասվածքն էր բուժում եւ չէր մարզվել: Յուրայի խաղային որակներն ինձ հայտնի են: Կասկած չունեմ, որ նա հիանալի կհարմարվի «Սպարտակի» խաղաոճին: Ցանկանում եմ հաջողություն մաղթել Յուրային, որպեսզի նա դառնա առաջնության լավագույն ռմբարկու»:

# «Ռեալը» ջախջախեց «Գալաթասարային»

**Մադրիդի «Ռեալը» գործնականում լուծեց կիսաեզրափակիչի ուղեգրի հարցը՝ սեփական հարկի տակ 3-0 հաշվով ջախջախելով թուրքական «Գալաթասարային»: Հաղթանակի հիմքը դրած Քրիստիանու Ռոնալդուն 9 գնդակով գլխավորեց չեմպիոնների լիգայի լավագույն ռմբարկուների ցանկը՝ շրջանցելով 8-ական գոլ խփած Լիոնել Մեսիին եւ Բուրակ Յիլմազին: Պորտուգալացի ֆուտբոլիստը չեմպիոնների լիգայում իր 47-րդ գոլը խփեց ու շրջանցեց Ֆիլիպո Ինձագիին: Նա այժմ ռմբարկուների ընդհանուր ցուցակում 6-րդ տեղում է: Իսկ ռեկորդակիրը Ռաուլն է, որը 71 գոլի հեղինակ է դարձել:**




Ապրիլի 9-ին Ստամբուլում կկայանա մրցակիցների պատասխան հանդիպումը, որում միայն հրաշքը կարող է խանգարել «Ռեալին» հաջորդ փուլի ուղեգիր նվաճել: Ի դեպ, «Գալաթասարայի» նախագահ Ունալ Այսալը թիմի ֆուտբոլիստներից յուրաքանչյուրին 25 հազար եվրո պարգեւավճար է խոստացել կիսաեզրափակիչ դուրս գալու համար:

Խաղի մասին թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

**Ժոզե Մոուրինյու** («Ռեալ»)-Մենք շատ լավ էինք պատրաստվել խաղին, «Գալաթասարային» էլ հարգանքով ենք վերաբերվում: Գիտեինք, որ լավ թիմ է, ուժեղ հարձակման գիծ ունի: Բայց այսօր մենք շատ հուսալի խաղացինք պաշտպանությունում: Կարծում եմ, որ ավելի լավ պաշտպանվեցինք, քան թե հարձակվեցինք: Կարող էինք ավելի խոշոր հաշվով հաղթել, սակայն 2-րդ խաղակեսում փոքր ուժերով էինք գրոհում:

Եթե մենք Ստամբուլում գոլ խփենք, ապա «Գալաթասարային» հաջորդ փուլ մտնելու համար հարկ կլինի 5 գնդակ ուղարկել մեր դարպասը: Ստամբուլում խաղալը միշտ էլ դժվար է, բացի այդ էլ մրցակիցը համառ պայքար է մղելու: Այնպես որ պատասխան խաղին էլ պետք է լրջորեն վերաբերվենք:

**Ֆաթիհ Թերիմ** («Գալաթասարայ»)-Այսօր «Ռեալն» իր կամքն էր թելադրում խաղադաշտում: Դա ես խոստովանում եմ: Մեզ բարձրակարգ թիմ էր դիմակայում, որը ձգտում է հաղթել չեմպիոնների լիգայում: Խաղադաշտում ուժերը հավասար չէին: Իմ սաներն արեցին ամեն ինչ: Նման կարգի խաղերում հարկավոր է գոլ խփել: Այդ դեպքում իրավիճակն այլ կլիներ: Ստամբուլում ծանր խաղ է սպասվում: Դժվար է մրցակցել «Ռեալի» հետ, երբ նա 3 գնդակի առավելություն ունի: Սակայն կներդնենք բոլոր ջանքերը:

«Ռեալ»-«Գալաթասարայ» խաղից առաջ թուրք ֆանատները հարձակվել են թուրքական BeyazT հեռուստաալիքի շենքի վրա՝ փորձելով հաշվեհարդար տեսնել աշխատակիցների նկատմամբ, որոնք կանխատեսել էին իսպանական ակումբի հաղթանակը: Անվտանգության աշխատակիցներին հաջողվել է արգելել ֆանատների մուտքը շենք: Ֆանատների հետ բախման արդյունքում աշխատակիցներից մեկը վիրավորվել ու տեղափոխվել է հիվանդանոց:

Քառորդ եզրափակիչ մյուս խաղում իսպանական «Մալագան» սեփական հարկի տակ գոլազուրկ ոչ-ոքի խաղաց Դորտմունդի «Բորուսիայի» հետ, չնայած հանդիպումն առատ էր գոլային պահերով:

Մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

**Մանուել Պելեգրինի** («Մալագա»)-Երկու թիմերն էլ լավ խաղ ցուցադրեցին՝ շեշտը դնելով հարձակումների վրա: Մարզասերները կարծում եմ գոհ մնացին խաղից: «Բորուսիան» շատ ուժեղ թիմ է: Հիշեք, որ թիմը 4 գոլ էր խփել «Այաքսին», Մադրիդում գրավել էր մրցակցի դարպասը, Մանչեսթրում էլ «Մանչեսթր Սիթիին» էր գոլ խփել: «Բորուսիայի» երիտասարդ ֆուտբոլիստներն էլ տեխնիկապես զարգացած եւ արագաշարժ են:

**Յուրգեն Կլոպ** («Բորուսիա»)-Մենք չօգտագործեցինք մեր հնարավորությունները, իսկ խաղավերջում արդեն անհրաժեշտ եղավ սառնասրտություն դրսեւորել 0-0 հաշիվը պահպանելու համար: Այս արդյունքը վատ չէ մեզ համար: Մեր մրցակիցը լավ թիմ է, որի հետ պատասխան խաղում գիտենք, թե ինչպես պետք է գործել: Լավ է, որ վնասվածքներից եւ որակազրկումներից խուսափեցինք:

# Սամբոն հավանաբար օլիմպիական մարզաձեւ կդառնա

Սամբոյի միջազգային ֆեդերացիան իր 75-ամյա պատմության ընթացքում առաջին անգամ հայտ է ներկայացրել ՄՕԿ օլիմպիական մարզաձեւ դառնալու համար: Այդ հարցը կքննարկվի մայիսին Սանկտ Պետերբուրգում կայանալիք ՄՕԿ-ի գործկոմի առաջիկա նիստում:

*ԲՌՆՑՔԱՄԱՐՏ*

# Երեք մրցանակակիր

**Բռնցքամարտի Հայաստանի հավաքականի 2 խումբ մասնակցեց տարբեր երկրներում զուգահեռաբար անցկացված միջազգային մրցաշարերի:**

**Ուկրաինայի Խերսոն քաղաքում անցկացված մրցաշարում Հայաստանի հավաքականի անդամներից առավել հաջող հանդես եկավ գյումրեցի Հովհաննես Բաչկովը: Մինչեւ 60 կգ քաշայինների մրցավեճում նա դրսեւորեց հաղթանակի հասնելու անկոտրում կամք ու հասավ մինչեւ եզրափակիչ: Նա նախնական մենամարտերում հաղթեց Լոնդոնի օլիմպիադայում 5-րդ տեղը գրաված ուզբեկ Գաիբ Նազարովին, ուկրաինացի Օլեգ Չեռնյակին: Եզրափակիչում Բաչկովի մրցակիցը խերսոնցի Պավել Իշչենկոն էր, որի հետ մենամարտում մրցավարները միավորների չնչին տարբերությամբ հաղթանակը շնորհեցին մրցակցին: Բաչկովը դարձավ 2-րդ մրցանակակիր, ինչը եւս լավ արդյունք է:**

**Մեր հավաքականի մյուս անդամներից կազմավորված խումբը ելույթ ունեցավ Ղազախստանի Ուրալսկ քաղաքում կայացած միջազգային մրցաշարում: Այստեղ եւս մեր հավաքականից մրցանակակիրներ դարձան: Բրոնզե մեդալներ նվաճեցին Կորյուն Սողոմոնյանը (49 կգ) եւ Ազատ Դավթյանը (91 կգ):**

**Մեր բռնցքամարտիկների համար այս մրցաշարերը ուժերի հիանալի ստուգատես էին մայիսի 31-ին Մինսկում մեկնարկելիք Եվրոպայի առաջնությունից առաջ: Մարզիչները հնարավորություն ստացան ստուգելու հավաքականի անդամներին ու հետագա մարզումների ծրագիր կմշակեն, ինչը թույլ կտա լավ նախապատրաստվել առաջիկա պատասխանատու մրցաշարին:**

# Կմրցեն Հայաստանի եւ Արցախի վետերան հանդբոլիստները

**Այսօր ժամը 15-ին Երեւանի խուլերի միավորման պալատի մարզասրահում կսկսվի Հայաստանի եւ Արցախի վետերան հանդբոլիստների ընկերական մրցախաղը: Ուշագրավ է, որ հանդիպման գլխավոր հովանավորը Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանն է:**

**Արցախի վետերանների հավաքականը Երեւան է ժամանել երեկ: Պատվիրակության ղեկավարը Արցախի հանդբոլի ֆեդերացիայի նախագահ, Ստեփանակերտի քաղաքապետ Սուրեն Գրիգորյանն է:**

**Հայաստանի եւ Արցախի հանդբոլի վետերանների մրցավեճի սկիզբը դրվել էր 2 տարի առաջ: Առաջին հանդիպումը կայացել է Ստեփանակերտում եւ ավարտվել է Հայաստանի վետերան հանդբոլիստների հաղթանակով, որոնք մրցակցին պարտության են մատնել 10 գնդակի առավելությամբ:**

**Հայաստանի հանդբոլի վետերանների հավաքականի ղեկը ստանձնել է նախկինում մեր լավագույն խաղացողներից մեկը՝ Աղասի Մխիթարյանը: Նրա գլխավորությամբ հավաքականը մարզումներ է անցկացրել եւ արդեն պատրաստ է հանդիպմանը: Նա հավաքականում ընդգրկել է Արա Հարությունյանին, Արմեն Հարությունյանին, Արսեն Հակոբյանին, Մհեր Նորենցին, Սամվել Նորոյանին, Վարդան Հարությունյանին, Եղիազար Գաբուզյանին, Մխիթար Անտոնյանին, Վարդան Մամիկոնյանին, Սահակ Կարճիկյանին, Գարեգին Թումասյանին եւ Հրաչիկ Կուրղինյանին: Վերջինս թիմում ամենատարեցն է: Նա 60 տարեկան է:**

# Արմեն Այվազյանը հետնապահների թվում է

**Սիդնեյի շախմատի մրցաշարի 2-րդ տուրում ավստրալահայ Արմեն Այվազյանը պարտվեց Ջուլիան Քուանին, իսկ հաջորդ պարտիան ոչ-ոքի ավարտեց Հարի Պրեսի հետ: Տեղեկացնենք, որ մրցումների պաշտոնական կայքում սխալ էր տեղի ունեցել: Իրականում Այվազյանը մեկնարկային տուրում ոչ թե հաղթել, այլ պարտվել է Հովե Ուիլյամսին: Այնպես որ 3 տուրից հետո հայ շախմատիստը կես միավորով 68 մասնակիցների մեջ զբաղեցնում է 59-րդ հորիզոնականը:**

**3-ական միավորով աղյուսակը գլխավորում են չինացի Լի Չաոն, հնդիկ Սետուրամանը, Ավստրիան ներկայացնող Չաո Ջոնգը եւ հունգարացի Աթիլա Ժեբեն:**

# Բեքհեմը ցանկանում է վերադառնալ Անգլիայի հավաքական

**Ֆրանսիական ՊՍԺ-ում հանդես եկող Դեւիդ Բեքհեմը հայտարարել է, որ չեմպիոնների լիգայում հաջող խաղի դեպքում չի բացառվում իր վերադարձն Անգլիայի հավաքական:**




**«Հավաքականում ելույթներս ավարտելու մասին երբեք չեմ հայտարարել, քանի որ մտապես հույս եմ ունեցել կրկին կրել ազգային ընտրանու մարզաշապիկը: Եթե նույնիսկ մեկ հնարավորություն լինի կրկին խաղալու հավաքականում, չեմ հրաժարվի: Ճիշտ է, արդեն 38 տարեկան եմ եւ իմ հնարավորությունները չնչին են, սակայն ոչ ոք չգիտի, թե մեզ առաջիկայում ինչ է սպասում», հայտարարել է Դեւիդ Բեքհեմը:**

**ՊՍԺ-ի նախագահ Նասեր ալ Հելաիֆին մտադիր է եւս մեկ տարով երկարաձգել Բեքհեմի հետ կնքված պայմանագիրը: Ըստ նրա, Բեքհեմը ոչ միայն հռչակավոր ֆուտբոլիստ է, այլեւ բացառիկ անձնավորություն: ՊՍԺ-ի բոլոր ֆուտբոլիստներին շատ հաճելի է Բեքհեմի հետ շփվելը:**

**Այս առնչությամբ Բեքհեմը նշել է, որ իր հետագա անելիքների մասին որոշում կկայացնի միայն մրցաշրջանի ավարտից հետո: Դեւիդը նշել է, որ յուրաքանչյուրն էլ կցանկանար ապրել Փարիզում, սակայն արդեն երիտասարդ չէ եւ ամեն ինչ պայմանավորված կլինի իր ֆիզիկական վիճակից:**

**Հիշեցնենք, որ Բեքհեմը ՊՍԺ էր տեղափոխվել այս տարվա հունվարին եւ արդեն հասցրել է թիմի կազմում 5 խաղ անցկացնել:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

